

„Droschak“

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.

ԴՐՈՇԱԿ

ADRESSE: 13 R. ANTOINE
 RÉDACTION DU JOURNAL
 „Droschak“
 GENEVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՆԿԱՆ ԳԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՍՊԱՍՈՂԱԿԱՆ ՎԻՃԱԿՈՒՄ



Դարձեալ յուսոյ, ակնկալութեան օրեր... Եւրօպան ուժգին մի խրատուով ուզում է, կարծէք, ցոյց տալ սուլթանին, որ հայի աստղը դեռ ևս չէ մարել Յոսքերը սթափուում են երկարատե թմրութիւնից. հանրային կարծիքը մոլեգին յորձանք է տալիս և դիւանագիտութիւնը մեղադրեալի աթոռի վրայ դրեւելով՝ խօսք է առնում ինքզինքը պաշտպանելու:

Թիւրքաց դաւանութիւնների արձագանքն է, որ տխուր շուռաշուռով անցնում է կրկին քաղաքակիրթ աշխարհի վրայից. հայկական խնդիրն է, որ մոռացութեան անդէնդից դուրս նետուելով՝ ցցուում է նորից պարլամենտական ատեանի առջև:

Այն հազադէպրօպէսներից է սա, երբ անակնկալ անցքերը դալիս են վայրկենաբար լուսաւորելու թշուա հալածականի խարխափող գիտակցութիւնը, երբ մահաւան ճիրաններում գալարուող մասսան՝ ջարդի ու անհաւասար կռի կրկէսում մի վայրկեան հոգի է առնում, սրտապնդուում է, բեւելով հեւուից օգնութեան խուլ մրմունջներ... Ախտով չափ ամօքուում են նրա վշտերը, կազդուրում են նրա վէրքերը:

Արբան կը տևէ արդեօք այս յուսատու սպասողական դրութիւնը...

Յսվորել ենք յոռետես լինելը Ընտելացել ենք դիւանագիտութեան սին ու ամուլ ծանուցումներին: Հեռու պահենք, այնուամենայնիւ, բացարձակ սկիւտութիւնից: Ոչ չափազանց յոռետես, ոչ չափազանց լաւատես: Պաղ անխուով համբերութեամբ դիտենք անցքերը և սպասենք նրանց վախճանին:

Իսկ մինչ այն՝ հաճելի է մեզ արձանագրել որ հայկական համակրութիւնները այսօր շեշտուում են Եւրօպայի բոլոր կէտերում աւելի ուժգին, քան նախորդ թւականներում: Առաջին անգամն է, որ Բերնի համաշխարհային խաղաղութեան բիւրօն այնքան կորովի դիմում է անում՝ վեց պետութիւններին, ցոյց տալով նրանց 61-րդ յօդուածի իրագործելու անյապաղ անհրաժեշտութիւնը: Առաջին անգամն է, որ սօցիալիստական բիւրօները ընդարձակ ու մոլեգին մանիֆէստներով յորդոր են կարգում Եւրօպայի աշխատաւոր ընդհանրութեանը՝

ձայն բարձրացնել պարլամենտներում ու հրապարակական ժողովներում ինպատ հայութեան: Անգամ Աւրստրիայում՝ միացեալ ու բազմացեղ սօցիալիստական կոնգրէսում համակրութեան ցոյց են անում տաճկական բարբարոսութեան զօհերին:

Եւ այդ բոլոր ցոյցերի, այդ բոլոր մանիֆէստների ու ձուռերի մէջ միութարական այն է, որ դրանց հեղինակները չեն ուզում բաւականանալ սոսկ պլատօնական համակրութեան արտայայտութիւններով, սոսկ բողոքներով՝ ընդդէմ ջարդերի ու աւերումների — ինչպէս սովոր էինք տեսնել 1895-96 թւականներում — այլ նրանք վկայում են և փաստելով ապացուցանում, որ թալանն ու սպանութիւնը հայ երկրի նորմալ, առօրեայ վիճակն է և որ հետեւապէս պէտք է դիմել անմիջական ու արմատական բարենորոգումների՝ ի կատար ածելով Բերլինի դաշնագիրը և 1895-ի մայիսեան ծրագիրը:

Հայկական պրօպագանդը հասունացել է: Պրօ Արմէնիան՝ իր եռանդուն գործունէութեամբ, իր աղէխարշ նկարագրութիւններով ու արիւնոտ փաստերի հեղեղով պատրաստել է մաքերը աւելի գործնական ու բանաւոր աշխատանքի: Ամբողջ Փրանսիան է այսօր ոտքի կանգնել հայկական խնդիրն առաջ մղելու համար: Նոյեմբերի 4-ի հարցապնդումի ընթացքում Ջամբայի օրակարգին առաջնութիւն տալով՝ պատգամաւորական ժողովը և նրա հետ Փրանսիան համակրութեան մի յուզիչ ցոյց էր, որ կամեցաւ անել հայերին:

Միացել են բոլոր կուսակցութիւնները մի սրտաշարժ համերաշխութեան մէջ՝ յանուն մի քաւած, ողբերգական դատի, որի վսեմութիւնը գիտակցում են ամէնքն էլ: Հրապարակ են եկել Դիտուրնելի պէս մարդիկ, որոնք հեղինակաւոր ձայնով թերագրում են կառավարութեան, որ Հայաստանի բարենորոգումները պէտք է լինեն կենսորոնական խնդիր Փրանս-Թիւրքական ընդհարումի մէջ և հրաւիրում են մինիստր Դելկասսէին նախաձեռնող լինել միջազգային մի խորհրդատուով, որը վերջ դնէր հայկական դժոխքին: Փրանսիայի բարոյական հմայքին նախանձախնդիր և ուսական յղինակցութեան՝ մոլեռանդ հակառակորդ՝ Մեծ Յեղափոխութեան հպարտ դաւակները պարլամենտի մէջ ու լրագրական սիւնակներում թախանձաբին յորդոր են կարգում կառավարութեան՝ մարքել չարաշուք Հանօստյի ոճիրները, փրկել մի առաջագէտ, քաղաքակրթուող ժողովուրդ բարբարոսների ճանկերից և թող չտալ երբէք, որ այդ ժողովուրդի

Ճակատագիրը յանձնել մի այլ Բոնականի քմահա-

ճութեան... Ինչ է պատասխանում պ. Գեղկաստէ Ի՞նչ առաց նա նայեմքերի 4-ին ի պատասխան Գընի Կոչէնի և Զամբայի Հարցապնդումներին: Այնչ, կամ գրեթէ ոչինչ: Ընդհանուր բաներ, տարտամ, երկայրի յայտնութիւններ: Հարկադրած պաշտպանելու նա փութաց ծանուցանել որ ինքը ջերմապէս համակրում է հայերին և որ Ֆրանսիան դմիշտ կը բարձրացնէ իր ձայնը, որպէս զի հարցատահարութիւնները գազարեն", — և ապա իսկոյն կը բաց, յետ նահանջեց, յայտարարելով, որ Ֆրանսիան միակ ստորագրողը չէ Բերլինի դաշնագրի:

Յակնի, խոշոր հարցապնդումը դեռ յետոյ կը դայ և պ. Գեղկաստէ խոստացու արդէն աւելի հանգամանորէն պարզել իր հայեացքները հայոց հարցի մասին: Մեր բարեկամ Գիւստավ Ֆուլանէ պատրաստում է մի լուրջ ու ահաւոր դ. օ. ս. ւ. է, որը կունենայ, անկասկած, նոյնպիսի մի շառաչում, որպիսին ունեցել են համակրելի պատգամաւորի միւս կարևոր հարցապնդումները:

Սպասենք ուրեմն: Մեկ բան միայն պարզ է առայժմ, այն որ պ միսիտորը առաջիկայ հարցապնդումին ստիպւած կը լինի աւելի բացայայտ լինել և չպիտի կարողանայ այլևս դիւանագետի ձկուն լեզուով վարագուրել իր մտքերը — քանի որ, ինչպէս տեղեկանում ենք, նրա դէմ կազմակերպւում է մի պատկառելի գրոհ պարլամենտի բոլոր կուսակցութիւններէ:

Սպասենք: Եթէ Ֆրանսիական կառավարութիւնը այս անգամ էլ մի կերպ փախուստ կը տայ և «յանուն խաղաղութեան» կը հրաժարելի հայկական ողբերգութեան վերջ դնելու անհրաժեշտ նախաձեռնութիւնը ստանձնելու, եթէ այսքան հեղինակաւոր դիմումներէ ու մեծադուր ցոյցերից յետոյ էլ դիւանագիտութիւնը կը մնայ ձեռնպահ ու անկարեկիր — (ami vis) — Մենք մեր պարտքը կատարած համարելով՝ հանդէպ մեր խեղճ ու յաւերժօրէն մանուկ հասարակութեան և հանդէպ այն մի կարգ բարեմիտ եւրոպացիներէ, որոնք շարունակ ամբաստանում են մեզ, ցոյց տալով յեղափոխական տաքտիկի անպատեհութիւնը — ապացուցած կը լինենք միանգամ ընդմիշտ մեր մի շարք «խաղաղ», «օրինական» ձեռնարկներով: որ հայ յեղափոխականները անուղղելի տաք գլուխներ չեն, ամբարիշտ ու կուսակցի ղեկներ չեն, յեղափոխութեան, իբրև արևստի, խանգապու սիրահարներ չեն, այլ շատ նորմալ ու սովորական մարդիկ, որոնք տանջուած է հարազատ ժողովրդի անվերջ մաքրիտութիւնը և նրանից ելք գտնելու անգիմարելի տենչը:

Մենք ոճիր կը համարենք այն խաղաղութիւնը, որ դնւած կը լինի մեր ժողովրդի ծովածաւալ արիւնով և իբրև հաւատարիմ սպասաւորներ այդ ժողովրդի սրբապան դասի պարտք կը համարենք երբեմնապէս այլեկոծել դիւանագիտութեան փայփայած «խաղաղութիւնը»:

ՀԱՅԱԿԱՆ ՀԱՐՅԸ ՏՐԱՆՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԻՄԱՐԱՆԻՆ ՄԷջ

Սոյնմեր 4-ին, ֆուսնք-Թիւրք վեճին և ֆրանսական նաւատորմին Միտիլինէ կղզին գրաւելուն առթիւ կողմ հարցապնդումներու միջոցին, Մարտէլ Սմիթա և Տընիս Կոչէն քրիստոնեաներուն նստեցը ի նպատակ հայկական հարցին և Տիւրքի ու Վալտէր Ռուսոյի պատասխանները:

Մ ա ռ յ է ի Ս ա ն թ ա. — Նաւատորմիդը մեկնած ըլլալով կը հարցնեն՝ կառավարութեան թէ ինչ պայմաններով ետ պիտի դարձնէ զայն և ինչ գոհացում կը սպասե Թիւրքիայէն:

Կիմանանք որ սուղթանը նաւատորմիդին ճամբայ ելլելը իմանալուն, հրաման ըրած է կարգադրել աւելելքը բայց կը յուսամ որ Թիւրքիին և Լորանդոյի գոհացում տրւածին պէս, մենք ետ քաշուելու չենք:

Մեզ եթեաղելի դրութեան մէջ պէտք չէ դնեն, որ ասանկ ողորմելի արգիւնք մը ձեռք բերելու համար մեր նաւատորմիդը շարժման մէջ դրինք: Արդէն կը խօսել ուրիշ կարգադրելիք առկա գործերու մասին: Ար հարցնեն՝ արտաքին գործոց պ. նախարարին, արդե՞ք այդ գործերը Թիւրքիին և Լորանդոյի տեսակի գործերէն են, դրամապաշտներու (mercantis) գործերէն են կամ չէ նէ Հայաստանի կոտորածներուն վերջ մը դնելու մասին է դործը: (Մագիա հարութիւններ):

Կարծեմ թէ արտաքին գործոց Պ. նախարարը փափաքին հասած է, որ սուղթանին կողմէ մշակւած վարդերու յատակագիծերը և սպառնալիքները, որոնք մեզի կը խոստանային արիւնահեղ տեսարաններու վերագործը, ուր 300,000 հայեր իրենց կեանքը վրայ տրին, չպիտի գործադրուին: Պիտի խօսի անշուշտ որ Հայաստանը ից ն օ Ր մ ա լ (կանոնաւոր) վիճակը գտած է: Ար խնդրեմ իրմէ ճիշդուճշդել թէ ինք և եւրոպական գիւանագիտութիւնը ինչ կը հասկանան. Հայաստանի մէջ «նորմալ վիճակ» բնելով:

Խորհրդարանը պիտի տեսնէ որ այս նորմալ վիճակը արդարապէս ցուցնուած է, կամայական բանտարկութիւններու, գիւղերու աւերակներով, ժամերու և դպրոցներու հրկիզումով, կիներու և աղջիկներու առևանգումով երկար շարունակութիւն մըն է, մարդատու ընտանեկութեան վիճակն է: Արդը կը ըլլէ կը ջարդեն. անշուշտ 1894-ի ջարդերէն նւազ ծանր, բայց նորէն շարք չստանալ որ սպանութիւն չպատահի, ապացուցանելով որ Հայաստանի մէջ նորմալ վիճակ բուսածը եւրոպայի ամօթ ու նախատինքն է:

Եթէ դուք հրաւիրէք եւրոպայի միւս ազգերը միանալ ձեզի և նմանօրինակ սարսափներու վերագործը արգիւնելու համար, սուղթանին պարտադիր ընէք կարգ մը միջոցներ, զոր մարդկութիւնը կը պատկերէ, ունէ բարդութիւններէ վախաւոր բան չունիք:

Սպասակա չէ հայկական հարցի մասին հիմնովին ճառել: Մեր պաշտօնակիցը պ. Ֆուլանէ Հայաստանի մասին պիտի հարցապնդէ արդէն, և վիճաբանութիւնը իր ժամանակին պիտի գայ հասնի: Իմ թղթածրարի մէջ շատ վկայագրեր ունիմ, որոնք կապացուցանեն թէ անհրաժեշտ է միջամտել: Մեր եղբայրակիցը Բիէն Գիյաու, արդէն արտասուցեց հայոց դատին պաշտպան քաջասիրտ Pro Armenia-ի մէջ վերջերս Հայաստանէն եկած ամենաստոյգ վկայութիւններ, որոնք կը հաստատեն թէ Գիւրգերը յարձակելով Մոկուսը գիւղի վրայ, որուն երկի մարդիկը բանտերը նետուած էին, կողոպտած և յետոյ

բայր տները արած են և կը նկարագրեն այդ գծերստ
երկիրներուն վրայ սաւառնող սարքաւորը:

Արդէն առաջին դիմումը մը ասնն, արտաքին գործոց
նախարարին ուշադրութիւնը գարձուցի այն ծրարի
ձեւին, զոր սուլթանը կը պատրաստէր այս ձեռն կտոր
բաժները վերսկսեցաւ համար:

Սասունի մէջ զօրանոցի մը շինութիւնը բնակիչներու
կոտորածէն խլիջ սա միջը: յաջադասանէրք մեզ մեր պաշտ-
պաններուն դէմ:

Ասին մարդ գիտե՞ն, որ քիւրդներուն դէմ հայերը պաշտ-
պանելու դաջող հանձնարար բանակի գնւորները 1894-ի
ահաւ կոտորածներու հեղինակները եղան:

Կըստ ասանք արտաքին գործոց Պ. Նախարարին, որ
յայտարարէ մեզի թէ մեր նաւատորմըը Արեւելք չէ գա-
յած միջինայն թիւ պիտին և Լորսնոսն պաշտպանելու
համար, այլ նաև կոտորածներու վերադարձին առջև
առնելու համար: Անտան զամենայն կրնայ ըսել օտար
պետութիւններուն, որ 300,000 հայերու սպանութեան
պատասխանատու հեղինակը ան մարդն է, զոր Ալաասոսն
կ'անւանէր յՄեծ Մարդասպան, և թէ եւրոպական
ազգեքը պարտաւոր են ասկէ ետքը այդ մարդը գնել
միասեղու անկործինութեան միմակի մեջ (Բուսն Եսփա-
հարութիւններ):

Յ ը ն ի ս Վ օ շ է ն. — Երբ մեք կը բողբեցինք հայ-
կական ջարդերու դէմ, կը մարտիկներ, որ միջառնութիւն
մը ըլլար: Ես Պոլսոյ քարապիներով կարելի էր դարձել
ախտաւեն, երբ անոնք գծերստ աննկնիներու արիւնով
ծածկուան էին: (Եսփահարութիւններ):

Ենչ ալ ըլլայ մեզի գործի մեզ շարժանիքը, մեր
գորշակը ալ մեր մը ձամբայ կըստ է: Արդե՞նք մեք
կերթուող պահանջել որ խոտաւորած բարենորոգութիւնը
կատարին: Ահա ինչ որ պետք է ուզել սուլթանէն:

Պետք է յարգել սուլթանը հովանաւորութիւնը, սպա-
հովել Բեքիին դաշնագրին գործարարութիւնը, կ'ալ ի-
ա ի Լ ա ի օ Ն ն ե թ ու յարգանքը: Եսար համար
պետք է համաձայնութեան գանք եւրոպայի հետ:

Երաւ է, մեք Թուրքիոյ հետ դաշնակցութիւնով կապ-
ուած ենք: Բայց պետք չէ մտնայ որ Թրանսայի բարե-
կամութիւնը իր գինը ունի և պետք է որ վարձատրուի (սոր
ծափա հարութիւններ):

Վուզէի որ Թրանսական գիւնագրութիւնը գաւառ
մէջ պետութիւններուն և ըսէր: յմեք նախաձեռնու-
թիւն առինք, որովհետեւ ասանգործն մեք առաջնութիւն
ունինք, քայք ես ձեզի կը հարցնեմ, Բեքիին դաշնագրին
ստորագրող պետութիւնները, թէ զուր չէք ուզեր միանայ
մեզի բռնաւորին զօրով ընդունել սալու խոտաւորած
բարենորոգութիւնը, զի յուզն յարժար է և արգարու-
թեան ժամը եկած:

Արտաքին գործոց նախարարը Պ. Յեյկասէ, առաջին
յայտարարութիւնով, իր պատասխան նախորդ երկու
ատենաբաններու նախերուն, ըսաւ:

— Երեք տարի է միշտ շահաբաւուած եմ Հայաս-
տանով և թէ հայերը քանի քանի անգամ իրենք իսկ
ձանջած են մեր գործունեութեան ազդեցութիւնը:

Այս երկու խօսքն ետք, Պ. Յեյկասէ ծանրացաւ երեք
կէտերուն վրայ, որ իրենց հպատակներու առնելովը և
կէտերուն վրայ, որ իրենց հպատակներու առնելովը և
քարապիներու խնդիրը կը շոշափէր: Կազի իր ձեռք
մերժացուցած, Եսփահարոյն ձեռնակողներն զանազան ձայնք
աղաղակեցին:

— Կապաւ Հայաստանը:

Պ. Յեյկասէ երկրորդ անգամ ստիպեցաւ խօսիլ
Հայաստանի մասին:

— Եմ գիտողութիւններու սկիզբը ըսի որ հայկական
դորներու մասին վերապահած էի ետքն պատասխանել
քայք ըսնի որ խորհրդարանը բացատրութիւն կը պա-
հանջէ, այսօր իսկ պատրաստ եմ ըսել կառավարութեան
մտածումը: (Ըստ լաւ):

Ըսի որ մեք պատրաստ էինք պաշտպանել Թրանսայի
բարդպիսն շահերը, ինչպէս մեր մասնաւոր ազգային-
ներու շահերը:

Բայց միւս կողմէն կրնան ըսել մեզի. յի՞նչ դուք միշտ
Ծօն Բիշոպ պիտի ըլլաք: (Չանազան շարժումներ և
բողոքներ):

Գ ու Լ Ե ի է ր. — Պ. Նախարար, մարդ այդպիսի խօս-
քեր չենք:

Կը հարցնեն նախարարին, — աւելցուց Պ. Յեյկասէ,
յի՞չեղնելով Հայաստանի վերջին կոտորածները — թէ ինչ
մտադիր է ընել Մարգար կը դադարէր մարդ ըլլալէ եթէ
անապրքեր մար ատենք: Կարգացած եմ բոլոր տեղե-
կագրերը, որոնք բոլորն ալ կը հաստատեն երկիրն
ցաւալի դրութիւնը, ուր կը կատարին սպանութիւններ,
կոտորածներ, որոնքէն ոմանք հերքեցան և ճիշդ չեղան:
Մարդ է թէ 1856-ի և 1896-ի նախատեսած բարե-
նորոգութիւնները բաւականին չեն գործադրած, թէ քրիս-
տոնեաները այդ գաւառներուն մէջ չունին այն կացու-
թիւնը, որուն իրաւունք ունին, թէ հայերը ընդհանուր
անապահովութեան աննեն աւելի սաւապոյններն են
և յաճախ ո՞՞ր ա գ ո թ Ն ե թ ը անպատիժ կը մնան:
Մեր հիւպատոսը կը գրէ. երբ կառավարութեան Կոստան
զրկած բանակին հրամանատարը կ'ըսէ որ եկած է
հայերը պաշտպանելու քրքերուն դէմ, հայերը չեն ուզեր
այդ եղանակով պաշտպանիլը յմեկի տեղ երկու թշնամի
պիտե՞ ունենալիք: ըսելով:

Նախարարին անցեալը երաշխաւորութիւն մըն է իր
ապագայ ընթացքին. ոչ միմակ Ասիոյ, նաև եւրոպայի,
Պալքաններուն, Մակեդոնիոյ մէջ մեր հանրապետութիւնը
չպիտի գազդի իր ձայնը բարձրացնելէ, անխոր բոլոր ազ-
գերուն համար, որպէս զի հարստահարութիւնները գազ-
րին, որպէս զի արդարասիրութիւնը և արգարութիւնը լոկ
բաւեր չ'ըլլան, որպէս զի հանգիստաւորէն սասանուած
խոտաւորները վերջապէս յարգին:

Բայց Թրանսան չէ միմակ Պերլինի դաշնագրութիւնը
ստորագրողը: Ենք պատրաստ ըլլալով իր համբարշխու-
թեան պարտականութեան բաժինը լայնորէն կատարել
չի կրնար մտնալ այն գծերգոյն պարտականութիւնները,
որ ունի ինք իրեն հանդէպ:

Բւէի դրած երեք օրակարգերէն խորհրդարանը 227
քէտով 212-ի դէմ, առաջնութիւն տուա Մարսէլ Սան-
բայի հետեւալ բանաձեւն.

Նորոգչարարները, համարած ըլլալով, որ Թրանսան
իր պարտականութիւններուն մէջ թերացած պիտի
ըլլայ, եթէ չպաշտպանէ հայերը նորանոր կոտորած-
ներու դէմ, և որոշած ըլլալով խաղաղօրէն ապահովել
այդ պաշտպանութիւնը տերութիւններու հետ միա-
ձայն, կանցնի օրակարգին:

Ձ ա յ ն մ ը. — Մարդասպաններուն հետ խաղաղու-
թիւն չեն ընելք:

Պալքար Ռուսո, նկատելով որ նախարարութեան հա-

մար ձախհարած մը պիտի ըլլայ Սանբայի բանաձևը, մէջ մտաւ և յայտարարեց երեսփոխանական ժողովին, որ կառավարութիւնը չի կրնար ընդունիլ առաջարկած օրակարգը. գահչիճին ստանձնած գործը արդէն ծանր է իր բարդութիւնով և ընդարձակութիւնով:

Ինչպէս կառավարութիւնը չի զոհեր իր համաքաղաքացիներու շահերը, նոյնպէս իր առաջին մտազբաղումներէն ըրած է ամբողջ բարոյական շահերու հայրենաւանդ մը, զոր պիտի չձգէ որ նւազի: (Շատ լաւ):

Այս գործը գրուի հանելու համար կառավարութիւնը պէտք ունի խորհրդարանին վստահութեանը:

Սանբայի օրակարգը չի տար այդ վստահութիւնը, ատոր համար կառավարութիւնը կը մերժէ գայն: (Ծագահարութիւն: — Շարժում):

Ի վերջոյ Սանբայի բանաձևը մերժեցաւ:

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ն Ա Մ Ա Կ Մ Ո Ւ Թ Ե Ն

30 օգոստոս 1901

Մ շ յ Լ և դ ա շ տ ի Տ ր դ Ե Տ ր. կ ա ո ա վ ա ր ու թ Ե ա ն Է ն տ ր ի գ ն Ե ր ր. — Մեր նախորդ տեղեկագրերու ընթերցողները անշուշտ լաւ կը յիշեն և կարծեմ երբէք մոռնալու իրաւունք չունին այն բոլոր խժոժութիւնները, որ ի գործ դրեցան վերջին մէկ երկու ամսայ ընթացքին Մշոյ և Դաշտի մէջ: Սոյն տեղեկագրովս ալ կուտանք միայն վերջին մէկ երկու շաբաթակայ մէջ կատարած գլխաւոր անցքերը, թէև արդէն գրելէ ձանձրանալու վրայ ենք և օրրատօրէ աւելի ու աւելի թուեալու կերպով կը ճնշէ մեզ այն հարցը՝ թէ ալ ինչո՞ւ գրենք, ո՞ւմ համար գրենք, ի՞նչ յուսով գրենք... Մենք շատ լաւ գիտենք, որ կողմերիս ժողովրդեան կորստեան հարիւրին իննսուն. պատասխանատուութիւնը կ'ընկնի ամենէն առաջ մեր հայրենաբնակ և օտարաբնակ հայ եղբայրներու վրայ, որոնք ժամանակին չկատարեցին իրենց պարտականութիւնը, մոռացան անցիալի փորձերը, սպասեցին մինչև այս հրդեհն ալ բորբոքէց և դեռ կը սպասեն... Եթէ այդպէս կը վերաբերին դէպի ժողովրդի տագնապալի վիճակը մեր հարազատ եղբայրները, ալ ի՞նչ ունինք սպասելու ուրիշներէն, ալ ո՞ւմ համար գրենք...

Բացարձակ և անարգել կերպով կատարած սպանութիւններ, զագանութիւններ, անլուր տանջանքները հայերիս թշուառութեան բաժակը դեռ չլեցուցին կարծես, հարկաւոր էր նորանոր գազանային միջոցներ ստեղծել: Վերջերս կազմեցաւ կառավարական պաշտօնեաններէ, թիւրքերէ և քրդերէ հրոսախմբեր՝ քողի մը ներքև՝ միմիայն հայերը կոտորելու նպատակով: Այս հրոսախուժքը իրարէ ետևէ յաջորդաբար յարձակում գործելով Դաշտի գիւղերու վրայ, սպաննեցին Գառնի գիւղէն 4 հայեր, Առաղէն 6, Բիշոյէն 8, Յունանէն 4, Մղսէէն 2, Շմլակէն 1, Ալվախնձէն 1, Վարդնիսիսէն 1, Սեմալէն 1, Մշոյ վերին թաղէն 1: Ամբողջը 29 հայեր: Այլևս հայերի հարստութիւնն — ոչխարն ու տաւարը աւարի անելու կարևորութիւն չարհիւր լոկ այս ծրագրով թէ «պէտք է ջնջել հայ տարրը՝ արդէն նրա ունեցածը մերն է»: Հրկիպեցին Մառնիկ հայ գիւղը: Մշոյ քաղաքին մէջ ալ փորձեր կը կատարեն յարձակում գործել առաջնոր-

դարանի և հայ թաղերու վրայ: Հայ տարրը բողոքովն յուսահատ, մշուշի մէջ մորթած կուռնկի նման կը տարուերի. իրաքանչիւր հայ կը սպասէ թէ «իր վրայ յարձակում գործելու և իր կեանքին ալ վերջ տալու կարգը ե՞րբ պիտի հասնի»: Ի՞նչ ընէ հայ ժողովուրդը, ի՞նչ հող տայ գլխին, ինչո՞վ պաշտպանէ իր կեանքի և պատուոյ գոյութիւնը:

Մշեցի Մէհմէդ աղա անուն թիւրքը, որ կը բնակի Դաշտի Գեմիկ գիւղ, որ Իտարէի աղա (կառավարչի — միւթէսարիֆի — խորհրդի անգամ) է, սորա որդին Չուպեր միացած պելպաշի քերդը աշիրէթի հետ յարձակում գործեցին Ծխաւու և Վուրավու գիւղերու վրայ և «Ֆէդայիներ կան ձեր գիւղի մէջ» ըսելով կըսկսին խուզարկել ծեծել հրացանի գնդակներով վիրաւորել անմեղ գիւղացիները, վերջապէս անլուր տանջանքներ տալէ յետոյ երբ ոչ մի վնասակար բան չեն գտներ, աւարի կառնեն 2 գիւղերու ամբողջ ոչխարներն ու կը վերադառնան: Մ ի թ է Մ ա հ մ է դ ն ու ս ու լ թ ա ն ը ի ր ա լ ու ն ք ա լ ա ծ չ Ե ն ի Լ ր ա ք ա ն չ ի Լ ր ի ս լ ա մ ի խ ու ղ ա ր կ ու թ ի Լ ն ն Ե ր կ ա տ ա ր Ե լ ու, ա մ է ն գ ա ղ ա ն ու թ ի Լ ն ն Ե ր ի գ ո թ դ ն Ե Լ ու, վ Ե ր ջ ա պ է ս հ ա յ տ ա ր ր Ը Բ ն ա ջ ի ն ջ ը ն Ե Լ ու:

Մշոյ քաղաքի ժողովուրդը, երկար ու բարակ խորհրդակցութիւններ կատարելուց յետոյ, հաջեւ հազ համարձակեցաւ դիմումներ կատարել սուլթանական պալատ և սուլթանի ոգևով ներշնչեալ պատրիարքարանը, սպասելով, որ սուլթանը, այդ մարդակեր գազանը, դեռ հացի փշրանքներ պիտի տայ հայերին: Ահա արդիւնքը. — պալատէն գաղտնի հրահանգ կը տրուի տեղւոյս կաւ վարչին, որ ջանայ ամէն միջոցներ ի գործ դնելով կաղապարել կատարած գազանութիւնները և հայ յեղափոխականներին վերագրել այս դժոխային գործողութիւնները: Այս ծրագիրը իրագործելու համար Բաղէշի կուսակալը կրկին վերագարձաւ Մուշ: Ալայի պէյը, Թապուր աղասին և Մշոյ երևելիներէն յայտնի բարբարոս Խալիլ էֆէնտին ելնելով Դաշտի գիւղերը խուժը մը ոստիկաներով բռնութեան, սպառնալից և անվերջ տանջանքները սկսեցին հանրագիր կնքել տալ հայերին. թէև շատերը կը դիմագրեն, սակայն ոստիկաններով կը տարւին Մուշ կը բանտարկւին: Օրինակ մը: Մշոյ Բերդակ գիւղացիներուն ժողովով եկեղեցւոյ մէջ, երեք անտուկ քարիւղ բերել կուտան և կառաւարկեն, «կամ կըստորագրէք և կամ գիւղը կրակի կուտանք»: Վերջապէս տանջանքներու տակ / գիւղի քեթիպին ստորագրել կուտան և կը հեռանան: Արդեօք ի՞նչ հարկ հանրագիր մը կնքելու համար այսքան գազանութիւններ ի գործ դնել: Ո՞վ է հարցնող և ի՞նչ պատասխանատուութիւն կը ծանրանայ իրենց վրայ: Ո՞վ չգիտէ որ այս բոլոր արեան շոգիները դուրեկան են նաև անխիղճ, անգութ Եւրօպային ալ:

Այժմս ալ կը լսուի, որ Վարինէ 4 թապուր զօրք կուգայ քննիչ յանձնաժողովով մը. պարզ է բացարձակ կերպով կատարած կոտորածներն ու ջարդերը կաղապարելու համար:

Մշոյ և Դաշտի աչքի դարնող անձնաւորութիւններու նկատմամբ ընդարձակ մասնութիւններ կատարած են. մասնիչը դեռ ստոյգ չգիտցուի: Վերջերս Մշոյ քաղաքացի Բոտեան Միսակ, Միրիճանեան Միհրան, հաճի

Յակոբ, Պօլէի Մձօն, կօշկակար Աղաբաշակ Լէյն Հայեր փնտուեցան իբրև յեղափոխական գործիչներ, որոնք փախուստ տւին. Հաստատ գիտնալով, որ կառավարութիւնը առանց չոր ու դալարը փնտուելու պիտի մատնէ բարբարոսական տանջանքներու, ինչ որ արած է ամէն մի բանտարկեալ Հայի: Յեղոյս բանտային կեանքն ու կատարած դիւային գազանութիւնները նկարագրելու համար թերթեր են պէտք, տոկուն սիրտ է հարկաւոր, այն էլ անշուշտ անհաւատալի պիտի երևի լսողներու համար, ուրեմն այդ մասն ալ սովորական գազանութեանց կարգն հաշուելով անցնենք վրային: Մոկուներ հայ գիւղացիք դեռ բանտն են. հարիւրաւոր կիներ ու երեխաներ դեռ Մշոյ փողոցներ կը մուրան. գիւղն ամբողջ դեռ կը մխար: Բանտին մէջ տիրող հիւանդութիւնն երթալով համաճարակ կը դառնար: Մոկուները յիշուցնէ 6 հոգի մեռան բանտին մէջ. մնացածներն ալ հոգեւարք վիճակի մէջ են: Մշոցի Դաշոյեան Միքայէլը, որ ոստիկանի մը զրպարտութեամբ բանտարկած և Յ տարի վճիռ տրւած էր՝ առանց փոքր պագոյց մը ունենալու՝ մեռաւ: Մահան վրայ ալ սատանայական քրքիջներ արձակելով դիակները դուրս կը նետեն:

Այս բոլորն ալ դեռ մեզ չյուսահատեցուց. դեռ կը միտնալուէնք գէթ այն յոյսով, թէ մեր ազատութեան համար տրւած արիւնը, զոհը, կախաղանը գէթ թող պիտի տար մեզի իբրև հայ մեռնելու, սակայն այդ յոյսներս ալ ահա կըսկսի մարիլ:

Մշոյ և Դաշոյի հայը, տիրող դրութենէն բոլորովին յուսահատ, օրթոդոքսութեան կը դիմէ. հանրագրեր պատրաստած են և ամէն կերպ աշխատութիւններ կը լինին: Երանի թէ բոլորովին բնաջինջ լինէինք, քան այսպիսի ազգայնական անպատիւ ձեռնարկ մը լինէր: Այդ թուրքն ու նախատինքը թող լինի Մշոյ այն սերուդին, որ ցարդ ժողովրդի մէջ չէ կրցած մարմնացնել յեղափոխութեան տարրական սկզբունքները:

Այս է մեր ներկայ կեանքը, գէպի ո՞ր կը տանի մեզ ներկայ դրութիւնը, այդ հեղեղի հոսանքը ո՞ր պիտի հանէ մեզ՝ մենք ալ չգիտենք և գիտնալու հետաքրքրութիւննիս ալ օրըստօրէ կը կորսնցնենք...

2 սեպտեմբեր

Յեղոյս ժողովուրդը, սուլթանի ոգով ներշնչւած պատրիարքի ընթացքէն յուսահատելով, կրօնափոխութեան կը դիմէ: Յեղս եկած է վանայ ուսական հիւպատոսը, որուն կը պատրաստին կնքած հանրագրեր յանձնել հակառակ մեր թափած բոլոր ջանքերուն: Յեղս եկած է Վարնոյ ֆէրիքը: Հասնող հազարաւոր զօրքերը բաժնեցին Դաշոյի կասկածելի գիւղերի վրայ. կտրեցին Սասունի, և Դաշոյի յարաբերութիւնը, իբր թէ բարեկարգութիւն մը կաշխատին մտցնել բայց խաղ մը կերևի: Վանայ ուսական հիւպատոսը Մոկուներ հրկեհած տունները ու ցանքերը քննելէ և մոկուները հարցաքննութեան տակ առնելէ յետոյ, այժմս կը բնակի Մշոյ մէջ: Կը խօսուի, որ ուրիշ ներկայացուցիչներ ալ պիտի գան, բայց ստոյգը չի գիտցիր: Ինչպէս կերևի կառավարութեան արդի նպատակն է, հայերին այնպիսի դրութեան մէջ մտցնել որ ոչ մի յեղափոխական շարժում կամ երթեկութիւն չլինի:

10 սեպտեմբեր

Վերջին մի քանի ամսայ մէջ կողմերս վառած հրդեհի ու անվերջ սպանութիւնների, կողոպուտների հետևանքն

եղաւ այս. — տաճիկ կառավարութիւնը թափեց տեղս բաւական մեծ քանակութեամբ զօրք. եկող զօրքերը տեղաւորեցին Դաշոյի այն գիւղերու մէջ, որոնք Սասունի և այլ գաւառներու երթեկութեան գծերն են: Կը կասկածինք նոր չարիք մը կատարուի, այնպէս որ եղածները մոռնանք: Սուլթանի հրամանով բռնութեան ներքև հանրագրեր ժողովուեցան կատարած չարիքները յեղափոխականներին վերագրելու նպատակաւ: Յեղս համած Վանայ ուսաց հիւպատոսը անցեալ օրւայ հեռագրով փոխ-հիւպատոս կարգեցաւ: Ժողովուրդն ալ բողոքովին յուսահատ և նամանաւանդ զղւած սուլթանի ոգով ներշնչւած պատրիարքի ընթացքէն, օրթոդոքսութեան հանրագրեր յանձնեց ուս հիւպատոսին, որ հրահանգ կուտայ գաղտնի պահել այդ հարցը մինչև բանակցելով կղերականներ բերել տար:

Տարած անգթօրէն կարնոյ բանտը նետած են եօթը մշոցիներ՝ Պետիկ, Բարսեղ, Առիկ, Հայրօն, Հայկ, Տէր-Վարդան, Նազար Խաչիկեան:

Ն Ա Մ Ա Կ Վ Ա Ս Պ Ո Ւ Ի Բ Ա Կ Ա Ն Ե Ն

7 հոկտ 1901, Վան

Խիզուո շէյխն վերջերս ճանապարհորդութիւն մը ըրաւ մինչև Պուլսնը: Ախերիմ թշնամի լինելով քրիստոնէութեան՝ բոլոր աշիրէթներու մէջ կը քարոզէ թողնել ցեղական կոիւններ, միանալ իբրար հետ և ամէն ծիգ թափել երկիրը մաքրելու պիղծ գեափուրներէ:

Տուրքերու հաւաքման համար անտանելի խստութիւններ կը լինին քաղաքին մէջ ալ՝ նոր արձակած զինուորներուն գէթ մի բան վճարելու համար, որոնք 7-8 ամիսներ է վեր կըսպասէին և դրամի չգոյութեան պատճառաւ մնացած էին զինուորութեան մէջ: Սեպտեմբեր 6-ին 100-ի չափ զինուորներ յարձակեցան հրամանատար ֆէրիկ Հիւսէին փաշայի կուռքին վրայ և դրամ պահանջեցին. հրամանատարը կառքէն վար իջնելով սպանելու հետ գանակոծեց այս ըմբոստները և ոչնչարի պէս քշել տալով զօրանոցը բանտարկել տւաւ: Մուրացկանի պէս այս ու այն անկիւնը ինկած դրամ կը մուրայ զինուորներու համար, որոնք կը հաստատեն թէ իրենց հաշոյն եկած դրամներ բարձրաստիճան պաշտօնեաներու տրւած է: Անոնք մաս առ մաս իրենց տեղերը կը զրկին, սակայն վաճ ճանապարհի վրայ դանակած հայ գիւղերու. ինչքն չեն քաշեր այս բարբարոս անօթիներու ձեռքէն:

Հայտարարնցի աշիրէթի պետ և համիդիէի գնդապետ Բէօն հիւսէին փաշայ, իր ցեղակից Հաճի Թէմուր և Էմին փաշաներու, և վերջինիս եղբայր Ալի պէկի հետ 50-ի չափ խօլաթներով, վերջերս Վան եկաւ մոկացի շէյխի մը աղջիկը կնութեան առնելու: Տեսնելու արժանի էր այս աւազակներու կոկոպակից թափառիլը Վանի և այգեստաններու մէջ բոլորն էլ մօսինի և մարթիի հրացաններով զինուած: Հիւսէին փաշայ, իբրև պաշտօնական անձ այցելու թիւններ տւաւ կուսակալին, զինուորական հրամանատարին, Անգլիոյ հիւպատոսին և ուրիշ պաշտօնական անձերու: Ամէն կողմէ յարգանք և պատիւ կը շւայլէր այս գազանին, որ կարմրուկ ոսկիներ կը սփռէր փոխադարձաբար:

Այս մարմնացած ոճրագործութիւնը Պատնոց, Սարը

Սու. Արձաժագ դաւաններու հայ ժողովրդեան արիւնք սղորակի պէս կը ծծէ. դաւաճաճներ կը սոսկան իրեն, և վայ այն կառավարական պաշտօնեային որ իրեն ըմհաճոյքը չի կատարեր. սպաննալիքով և բռնութեամբ պաշտօնանկ ընծելու իշխանութիւնը ունի շնորհիւ միւշեր Զեքի փաշայի:

Անցեալ տարի Արձաժագ դաւանի հայեր չկրնալով դիմանալ անոր բռնութիւններուն՝ իրենց գիւղապետներ զրկեցին տեղս կուսակալին բողոքելու: Թ Գուռը երկար հեռագիրներ առչէ, տեղական հիւպատոսներու դիմելն և երկար ամիսներ թափառելի վերջ հասնու կայտազայան իրենց պահանջներէն երկուքը գործադրել տալ: Եթէ իրենց գիւղերն բռնի բնակող քրդերն վտայել տալ, և կարգ մը տեղեր պահապան զինուորներ բնակեցնել Հիւսէին փաշայի աւարառութիւններու առջևն առնելու համար: Գողթովին անլընքի ձեաց անցեալի մէջ եղած չարագործութիւններն ու սպաննութիւններն:

Հիւսէին փաշայի գործին շեր դար թիւը զինուորներու գոյութիւնը գիւղերու մէջ: 1-2 ամիս հանդարտ անց, սկսաւ ձեռքի տակէ աշխատիլ, և ահա պատեհ առիթն ալ ներկայացաւ Առէն գիւղ տաւարներն յափշտակեցին նոյն փաշայի քրդեր. պահապան զինուորներ կը հետապընդին, կուր մէջ մի կալ քիւրդ կը սպաննուի և միւսներ կը փակելին: Հիւսէին փաշայ իրողութիւնը բողոքովին խեղաթիւրեղով՝ բողոքեց զինուորներու դէմ. կառավարութիւնը, որ արգէն առանց թմբուկի կը խաղայ, անմիջապէս զինուորները հեռացուց գիւղերէն և վերոյիշեալ կուրն մասնակցող եօթը զինուորներ դատի ենթարկեց: Խեղձերը վերջերս կը պատարասուէին իրենց հայրենիքը գնալու, ժամանակամիջոցին լրացած լինելով. դաւանի դատարանը եօթնական տարւած բանտարկութեան դատապարտեց զանոնք: Ասպարէզը դարձեալ Հիւսէին փաշային էր, աւեր և կողոպուտ սկսան: Սպաննալիքի տակ շնորհակալութեան գիր մը ստորագրել աւա նոյն դաւանի հայերուն և զրկեց Զեքի փաշային, ինչպէս երբեմն սուլթանի համար կը լինէր Եւրոպան խորհրդ: Արեժ-խընդրութեան ժամն էր այլևս. բողոքող հայեր սկսան դողալ, այլևս ուր դիմել, կամաց կամաց վերջինն ծոնցին անոր լուծի ապէ: Քիւրդեր գիշերանց պաշարեցին Գոչերի գիւղի Մեղիք Գասպարի տուն, որ փակեցելով մահաճէն ճողոպրեցաւ: Սա բողոքողներու ամենահամարձակը կը սեպէր: Մահաճէն սպաննալիքի տակ ուխտագնացութիւն մը սկսաւ. բողոքողներ Զար ճուր ընելով կարգի ոսկիներով գնացին փաշայի ոտըը համարներու և ներողութիւն խնդրելու: Բացի ապէ Հիւսէին փաշայ 200 ոսկի պահանջեց իրը ծախք զոր պատճառած են եղեր իբր բողոքողներն և նոյն քանակութեամբ ալ յորին: Սակայն թէև ամէն կողմէ լքած, դարձեալ ընդգրկմանալու քաջութիւնը ունեցան ոմանք, լաւ համարելով սքանչալ քայն սարուկ դառնալ այդ ստոր արարածին: Այդպիսիներու կարգէն են Գոչերի գիւղացիներ:

Գոչերցիներ արդէն դատաւարութեան մէջ էին Հիւսէին փաշայի դէմ, որ իրենց գիւղի սեփական մի ընդարձակ արտատակի տիրապետած էր: Այս գիւղացիներ շատ պարագաներու մէջ անոր շարութիւններն ի գերե հանած էին և այսպիսով վրէժխնդրութիւնն աւելի գրգռած: Օգոստոսի վերջերն կը ինք վան եկաւ, իր գրգռմամբ և հրամանաւ համարիչի հաղաբարեաւ ևստան աղայի դամբակ Կասիմ և Էսփէշի լամակ Խեճօ վեց զինուոր

քիւրդերով յարձակեցան նոյն գիւղին վրայ (սեպտ. 1) և օր ցերեկով ժամը 9-ին (ը. թ.) գիւղի տաւարն քշեցին տարին: Գոյմագամը, որ Պարկատ գիւղը (1 ժամ հեռու Գոչերիէն) կը գտնուէր, բողոքովին մերժեց հետապնդել աւաղակներն. իսկ բաւական վերջն ալ զրկած մի յիսնապետ իր զօրքերով կէս ձանապարհին ես դարձան, վախնալով և կամ լաւ ևս դիմամբ:

Գիւղացիներ, այլևս յուսահատ կը դիմեն կուսակալին և համարձակ կ'առաջարկեն. յիսմ պաշտարանութիւն, կամ դաղթելու հրաման, կամ զենք ինքնապաշտպանութեան համար: Կուսակալը կը խոտանայ աւարը ետ աւելնել և հարց տալին: Մահակ վարդապետը կը զրկէ Հիւսէին փաշայի քով: Անրկին կը խոտանայ իր տեղը վերադարձանին պէս աւարը վերադարձնել: Մահայն իր վարդապետը ծայրայեղ տատանանի հասած է և ստորգ վախ կայ թէ մօտերս անպատճառ գլխաւորներն երկուքը սպաննուի: Արդէն անոնցմէ մէկին, Մեղիքի վրայ, նոյնիսկ օրերս քաղաքի ձանապարհին վրայ իր խորհիւնք Մուքայէ և Էսպապ յարձակեցան երկուքի սուրբով, բայց ոստիկաններու վրայ հասնելով՝ հազու հազ արատեցաւ: Կրկնապէ Մեղիք բողոքին, ոտակները կը թողնեն. քիւրդերը, որ շարունակեն իրենց ձանապարհը:

Սեպտեմբեր 12-ին նոյն գիւղին Խաչոյի եղը կը յափշտակեն և կը տանին Էստան աղայի տուն: Գիւղացիին եղբայրը յիսնապետի մը հետ կ'երթայ պահանջել Էստան աղայ գիւղացին լաւ մը եկեղեկ վերջ կ'ըսէ. յիսուք ձեր գլխէն վախցէք. մաքն ինչ է որ հետամուտ կը լինիք. սպաննե՛ք, ձեր անխեղ գիւղը բողոքովին պիտի լնինք: Իսկ յիսնապետը լուռ համարեցաւ լինելն վերջ, հայերու քով ինքզինք կ'արդարացին. յիս համարիչի հաղաբարեաւ է, իսկ ես յիսնապետ, ի՞նչ կարող եմ ընել:

Սեպտեմբեր 13-ին շեմշեցի համարիչ Էստան աղայի խորհման գիշերան ժամը 1-ին (ը. թ.) յարձակեցան Գուր գիւղի վրայ, որ Մահմուտի դաւանին մէջ 55 հայ տուններ կը բաղկանայ: Երեք քաւորգ ժամ գիւղին վրայ կրակ ընելն վերջ 250-ի չափ ոչխար կը քշեն կը տանին, հակառակ երեք թիւք զինուորներու ընդգրկման, որ նոյն օրը գիւղը կը գտնուէր: Գիւղի քիւրդ պահապանը կը սպաննուի. իսկ աւաղակներն մին կը ձերբակալելի և կը տարի Խաչոյ: Կայեր ուղղակի կ'ամբաստանեն Էստան աղան, սակայն ան կը սկսի գայմազալին ներկայութեան գանակոծել հայերն և հայհոյել անոնց կրօնը, խաչը: Գոյմագամը կը վունդէ հայերն, որոնք վան եկած են այժմ կուսակալին բողոքելու. թող սպաննու ամիսներով:

Մահմուտի դաւանի հայերը բացարձակ գերի են դարձած վերոյիշեալ հասան աղայի, Մասուր և Ռաշիան պէլերու: Մուրհիւսէինի որ վերջերս ութ անձ կրօնափոխ ընել տաւ և Թեքի օլու Սեֆերի, Մահմուտ աղայի, որ հայերնակ գիւղի մը տիրապետած և եկեղեցին ալ մզկիթ դարձուցած է: Այս տարւայ մայիսին վերոյիշեալ Գուր գիւղին մի հայ աղջիկ կը փախցնէ Գլխաս անունով մի քիւրդ: Աղջիկը երեք ամիս բռնութեամբ պահուցէ վերջ կը փախցնէ գեպի վան: Ձանապարհին կը բռնի կրկն գիւղի (Կայոյ: Աոր) մայ միտիւրի Ռեշիա և Թեքիտիէն, որ շարաչար կը ծեծէ աղջիկը և կուրէ մահեղանակացներ: Կայերու բողոքին աղջիկը կը զրկեն քաղաք: Ձանապարհին ալ գալիթիւներ գանալան են:

դու թիւններ տարէ վերջ կիսամեռ կը հասցնեն հայոց առաջնորդարանը:

Օգոստոսի մէջ սպարկերտցի աղիկ մը հարս կը տարւեր Մոկս. ձանապարհին կ'առւանգէն քիւրդեր և կը տանին Խիզնու շէխի քով իսլամական կրօնքն ընդունել տալու: Աղիկն դեռ կը մնայ հոն:

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ւ Ն

Տ Ա Ս Ն Ի Ն Ն Ե Ր Ո Ր Գ Գ Ա Ր

(Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն - Ս Օ Յ Ի Ա Ա Ա Ա Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ւ Ն)

IX

Այդպէս շարունակաբար յօշոտում էր Յամկաստանը Այն վիճակաբի ուժը, որ երկու դար սրանից առաջ սարսափի մէջ էր պահում ամբողջ Արևմտեան աշխարհը, այժմ քարշ էր տալիս մի ողորմելի գոյութիւն և այն միայն շնորհիւ Եւրոպայի աջակցութեան: «Խնայան», «տար», «զգրելի» դեռապոլը սպառնական գլուխ էր բարձրացրել կայսրութեան բարձր սահմաններում և կիսաշուտնի խաւարման փողն էր հնչեցնում անդադար:

Չորսուած այլազան ու կենտրոնախոյս տարրերից՝ խլամական Թիւրքիան երկէք չկարողացաւ ներկայացնել օրգանական մի հասարակութիւն: Մինչև 60-ական թիւերը մահմեդականները փոքրամասնութիւն էին կազմում Այնուհետև անջատուած քրիստոնեայ երկրներին, օսման լինելը սկսեցին չլել դէպի Թիւրքիա և մահմեդական տարրը կամաց-կամաց իտացաւ, կենտրոնացաւ: Այնուամենայնիւ նա երբէք չկազմեց ձուլ միապաշար ազգային ամբողջութիւն, որ կարողանար առաջ մշել կուլտուրական գոյութեան կեռը և կըլել մարտել կայսրութեան այլազան տարրերը: Իշխող տարրը ստոր էր ու ա յ ա յ ի թ ամէն տեսակէտով Ղուրանը և ջերական-անարօպոլոգիական ողբալի Ֆեկատրները պահում էին նրան մշտնջենական անշարժութեան մէջ: Այդ անշարժութիւնը ցայտուն կերպով երևան էր գալիս արդէն անտեսական կենանքով, որի վարդապետը էական պայմանն է մի երկրի առաջադիմութեան: Թիւրքաց պետութիւնը, որ հաւատարիմ արտայայտիչն է օսմանեան բնդի, երբէք չխրախուսեց երկրի առևտուրն ու արդիւնագործութիւնը: ընդհակառակը՝ ամենախլայրենի միջոցներով միշտ խեղդել ջանաց անտեսական ուժերի փթիւնով և անհասական նախաձեռնութեան ոգին:

Թիւրքիան լաւ էր ըմբռնել, որ իր թուրքութիւնը առաջանում է հպատակ ազգերի այլազանութիւնից: Եթէ լինէին միմիայն օսման լինելը, չէին լինի ապստամբական շարժումներ և եւրոպական միջամտութիւն: «Գեղք էր ոչնչացնել կենտրոնախոյս ձգտումները: Բայց քանի որ իսլամը անընդունակ էր այդ անել խաղաղ կուլտուրական ձանապարհով: Մոտ էր ուրեմն կտրուկ, գործնական ուղին՝ աստիճանական, սիստեմատիկ բնաշնչումը: Առկամաները վարուց ըմբռնել էին այդ մեթոդի դաս-հրատեչյութիւնը»: Նա արտայայտում էր միթմ մասնային ջարդերի մերթ արհեստական սովի ու բուրի պաղծականացման մէջ, բայց նա կիրառում էր անշնչ, բարբարոսային հեանողականութեամբ և հենց թաշանի ու սպանութեան այդ ողբալի բազմաթիւնութիւնն էր որ դատարանը իջնում: Հնչեալ տեղի:

Ամէն անգամ, երբ հպատակ քրիստոնեայ ազգերից մէկը վերածնութեան և անկախութեան նշաններ էր ցոյց տալիս, թիւրքական խաղաղանք գալիս էր հնձելու վտանգաւոր ուժերը և ամայացնելու շէն գիւղերն ու քաղաքները: Բայց և ամէն անգամ այդ խարաղանի դէմ խողանում էր անմիջապէս մի ուրիշ խաղաղան — եւրոպական միջամտութիւնը, սրը գրեթէ միշտ յաղթական պատերազմով կամ խաղաղ ձանապարհով աջողում էր խել արիւնտա զոհին դահձի ձիրաններին:

Գրեթէ է միշտ, այս... Եւրոպական խաղաղանք մի շտ հաւատարիմ շննաց իր ազատարար կոչման: Նա մերթ ընդ մերթ վերաբաց, շարաշար գաւառաններով քաղաքակրթութեանն արօշնի: Բայց այդ վերաբացը երբէք այնքան ճշգրտ, երբէք այնքան աղետալի չէր եղել ինչպէս 1878-ից յետոյ, յընթացս այն անձ, շառաչալից դրամարի, որի անունն է Է ա յ կ ա կ ա ն Ծ դ ն ա թ ա մ: Այդ ձգտութեամբ և սւնեցաւ իր նախընթաց անհրաժեշտ մոմէնտները — ազգային վերածնութիւն և ազատագրական շարժումներ: . . .

Ցամեկններով դարը սահմանազարդ գրեց նաև հայի ստորկութեան: Այն ժամանակ, երբ թիւրքահպատակ բազմութիւն ցեղներ խորատուգած էին արևելեան ձահ-ձացան միջնորդութեամբ՝ Երդ ու անտարբեր դէպի քաղաքակրթութեան համապիւր ձառագայլները, հայր սկսեց կամայ-կամայ թօթափել իր միտայի հինգ դարու գեղութեան մղձաւանջը և խաւարի ու տառապանքի աշխարհում ցոյց տուց առաջադիմութեան փայտուն նշաններ: Իր արտատոյժոր կենտունակութեամբ, իր միջուկ ու գործուն հանձարի շնորհիւ, հայկեան փոքրութիւն ցեղը կարողացել էր գլուխ դուրս բերել պատմական ահել փորձութիւններին, մղել էր յաղթանակով գոյութեան ու քաղաքակրթութեան պայքարը երկար ու ձիգ գարներին ընթացքում՝ անընդհատ նաւորական արշաւանքներին, խուժուժ ցեղերի ու պետութիւնների դէմ, և հասել էր 19-րդ դարին, ուր պիտի մծուէր նրա լինել-չլինելու խնդիրը: . . .

Քառասնական թիւերից հայկական իմացականութիւնը տալիս է արդէն իր բողոքները և ինքնուրու են դարձնում Ցամեկահայրատանում, Միխիմայիանների հրատարակութիւնները սկսում են տարածել իրախուսում է ուսումը և Ժողովուրդային լախ դաստիարակութիւնը: Արևմտեան և մասնաւորապէս Փրանսիական գաղափարները մուտք են գործում հայ ուսումնաբէտ երիտասարդների միջոցով և սկսում են կենսը ներշնչել մահացնող միտայութիւն: Թիւրքահայերի վերածնութեան անձ զարկ տուց նաև Սահմանադրութիւնը (1860): Որքան և խորթ է հնչում արդարի մի անուն թիւրքաց սպանիչ ուժի մի ախուսմանայիւ սահմանադրութիւնը իրողութիւն էր և մի շտ խոշոր նշանում հայ աարի համար: Ուրիշ յետամնաց ցեղերի դիմաց՝ հայը ցոյց տուց, սր ինքն այնքան հասունացել է արդէն, որ կարող է վարել իր ներքին գործերը և կրանով էլ շնչանց իր քաղաքակրթական միտային Արևելքում:

Ննացնեալ բազմանում են ազգային կրթութանները մայրաքաղաքում ու գաւառներում, բնում են ինչի-րութիւնները հայկական բարեգործութիւնը բաց է անում իր բանասիրանը ազգային պեղներին համար: Հիմնում է և արթնտանան մանկու ապրանքն հատուտում է և արթնտանան կուսակցութիւնը:

լերան գագաթին. մշակում է հայոց աշխարհաբարը, ծաղկում է ինքնուրոյն և թարգմանական գրականութիւնը. Պոլսում ծնունդ է առնում հայկական թատրոն. բազմաթիւ հայ երիտասարդներ դիմում են Պարիզ պանազան ուսումնասիրութիւնների համար. հայի ձեռքն է ընկնում Հայաստանի աւետուրն ու արդիւնաբերութիւնը: Նա հանդիսանում է ճշմարիտ կ ու լ տ ու ռ տ ր ե գ ե թ, քաղաքակրթութեան տարածող և միջնորդ եւրոպայի ու Ասիայի միջև:

Այդպիսով ստեղծւում, կազմակերպւում է օսմանեան կայսրութեան ծոցում հայ համայնքը իր յատուկ ազգային կերպարանքով:

Առաջադիմութիւնը, ընդհանուր առմամբ, այնքան զգալի էր, որ Հաքոտհատուգէն՝ հռչակաւոր գիտնական ճանապարհորդը՝ պնդում էր, թէ հայը միակ քրիստոնեայ ժողովուրդն է Տաճկաստանում, որ ընդունակ է կազմակերպելու իբրև ճշմարիտ հասարակութիւն:

Ղերածնութեան փրկարար հոսանքով տարւում էր նաև հայութեան միւս խոշոս հատածը — կովկասեան Հայաստանը: Հէնց որ ուսաց տիրապետութիւնը փոքր ինչ կարգ սահմանեց այդ ալեծուփ ու անիշխանական երկրում, այդտեղ ևս շուտով փթթւեց հայի բեղմնաւոր իմացականութիւնը և հայրենիքի մտաւոր ու տնտեսական կեանքին հաղորդեց անսովոր կենդանութիւն: Մին-միւսի ետևից երևան եկան ուսահայոց վերածնութեան շամպիոնները՝ Աբովեան, Նազարեան, Նալբանդեան, որոնք եւրոպական առաջադէմ գաղափարներով զինւած, լուսաւորութեան ջահը ձեռին՝ ձգնում էին փոքր ինչ լոյս սփռել ազգային խաւար իրականութեան վրայ: Այստեղ ևս դպրոցներ, ազգային մամուլ ու գրականութիւն, այստեղ ևս հայր առաջնակարգ դիրք գրաւեց տնտեսական-արդիւնաբերական կեանքում: Եւ արարատեան հայութիւնը, ինչպէս և օսմանեանը ճիգ էր թափում՝ առաջ մղելու ընդհանուր ազգային վերածնութեան գործը:

Քաղաքացիական արիւթեան կցւում էր նաև զինուորական արիւթիւնը: Ռուսների Վովկասում մտնելու օրերից, ինչպէս նաև Տաւրոսի դագաթներին, հայը ապացուցեց, որ ինքը ընդունակ է նաև դիւցազնական սերագործութիւնների:

Ձէյթունը իր կիսանկախ գոյութեամբ ու յաղթական կռիւներով Եւրոպայի հիացմունքն էր շարժել 60-ական թւերի սկզբներին: Հայկական Մօսկոնեգրօն՝ Տաւրոսի անառիկ լեռներում ամրացած՝ կազմում էր դաշնակցական մի հանրապետութիւն իր իշխաններով, պարզ անպաճոյճ, նահապետական կենցաղով, նման այն ազատ, ինքնավար Գեոսական հաստատութիւններին, որ մենք հանդիպում ենք նախնական վիճակում, մարդկային պատմութեան արշալոյսին:

Միշտ ըմբոստ ու անընկճելի՝ նա վաղուց յայտարարել էր տաճկին յակն ընդ ակն՝ «ի օրէնքը և իր անմատչելի ապառաժներից կարողացել էր միշտ յաղթական կերպով յետ մղել թշնամու գրոհը: 1862-ի փայլուն ճակատամարտը, որ մեծ ու աղետալի շառաչում ունեցաւ Եւրոպայում, մի առանձին տեղ ունի Ձէյթունի և հայոց ազատագրութեան պատմութեան մէջ: Կանգ առնենք այդ էպիզօդի վրայ. նա վերին աստիճանի նշանակիչ է ոչ միայն հայի ռազմական կորովի տեսակէտից, այլև իբրև անբաժանելի մի օղակ արհաւիրքների այն երկարաձիգ շղթայի, որի մի ծայրը հասնում է յունաց

ընդերի շրջանը (20-ական թւականները), միւսը ձրգւում է մինչև հայկական տազնապի օրերը և աւելի հեռուն: Ձէյթունի դէմ լարւած այդ դաւադրութեան մէջ մենք նշմարում ենք միևնոյն էլէմէնտները, որոնք յետոյ երևան եկան Մեծ-Հայաստանի կոտորածներում:

Ձէյթունը խեղդել էին ուզում: Թիւրք բռնապետութիւնը վերջին յուսահատ ճիգն էր անում՝ ոչնչացնելու հայի անկախութեան մնացորդները: 1862 թ. օգոստոս ամսին էր, որ Ազիզ փաշան Պոլսից ստացած հրահանգներով յարձակւում գործեց Ձէյթունի վրայ: Պատուակը շնչին էր և հնարովի: Կոտորածի համար նախնական պատրաստութիւններ տեսնւած էին: Մարաշ և շրջակայքը լցրել էին նախօրօք չէքքեզների ու բաշիբօզուկների փոխմաներով, որոնք ուսաց յաղթութիւններից յետոյ չւել էին Կովկասից և սիրալոթար ապաստան էին գտել թիւրքաց իշխանութեան սահմաններում: Թշնամին առաջին գրոհը տեց Ձէյթունի դէմ գիշեր ժամանակ, երբ Տաւրոսի առիւծները խաղաղ բուն էին մտել: Մահմեդական Փանատիկոսութիւնը ժայթքեց, շրջակայ քաղաքներում իմամները մզկիթների բարձրութիւնից կռիւ քարոզեցին գեաւուրների դէմ. . . Ջարդ, թալան, տների աւերում, տաճարների սրբապղծում. . . Կանայք ու քահանաներ խողովակցին, երեսաները կենդանի այրեցին:

Խրախուսւած այդ առաջին ջողովութիւնից՝ Ազիզ փաշան առաջ գնաց: Ձէյթունցիք՝ կանայք ու տղամարդիկ զինւած, համեմատաբար փոքրաթիւ՝ ամրացան իրենց անառիկ խորշերում և դարանամուտ սպասեցին բարեյաջող վայրկեանին: Վայրկեանը հասնելուն պէս ազգանշանը տրւեց, և նրանք գահավէժ սլացան դէպի թշնամին: Իրարանցումը կատարեալ էր. վայրենի բաշիբօզուկները ահաբեկւած՝ փախուստ էին տալիս հայ կտրիճների առաջ: 800 հօգի ընկան թիւրքերից, պարզովի դաշտը ծածկեց դիակներով ու վերաւորներով և Ազիզ փաշայի զօրքը ջախջախւած, զրկւած թնդանօթներից ու դրօշակներից՝ անասելի անկարգութեան մէջ շտապեց դէպի Մարաշ, այն ինչ զէյթունցիք դրօշակներով ու յաղթական երգերով վերագարձան իրենց բնքը: Ձէյթունը փրկւած էր:

Արքան տարբեր էր պատկերը Մեծ Հայաստանում. . . Այստեղ բռնաւորը իշխում էր դեռ իր բոլոր մոլեգնութեամբ. այնտեղ Մասունը մի հատիկ օազիս էր ստրկութեան լայնատարած անապատում և միլիոնաւոր ազգաբնակչութիւնը սրտաշարժ խոնարհութեամբ քարշ էր տալիս դեռ փաշայական կամայականութիւնների լուծը:

Հինգ դար գերութիւն. . . և այդ ահագին տարածութեան վրայ երբէք ապստամբութեան ուէ փորձ, երբէք ամենաթոյլ ըմբոստութեան նշոյլ: Ո՞ր էր արդեօք այն մոգական գաւազանը, որ մի հարւածով յեղաշրջէր այդ դարաւոր, զարհուրելի իրականութիւնը. . . Հայը դեռ ևս նորատես էր, միզօնէիստ. նա դեռ հնութեան մոլեռանդ երկրպագու էր, նոյնիսկ այն անանուն բռնակալութեան, որ աղճատել էր նրա հօգին ու մարմինը. նրա մէջ դարերով մշակւել էր այն ողբալի, բացասական յատկանիշը, որ առաւել կամ նւազ չափով յատուկ է երկարատև բռնութեան բոլոր զոհերին և որ հօգեբանները անւանում են ս ո վ ո ռ ու թ ե ա ն բ ո ն ա կ ա լ ու թ իւ ն: Հայը շատ էր ընտելացել «այայի»

կացութեան. և նրան փոքր իշատէ զգաստացնելու համար, նրա հոգին դէպի սուրբ ընդվզումը մղելու համար բաւական չէր սոսկ գաղափարը, բաւական չէր վերածնութեան հասանքը: Պետք էին նաև ուրիշ ցնցող պատճառներ: Եւ այդպիսիք եղան մի կողմից երկրի օրըստօրէ Կառնացող վիճակը և միւս կողմից՝ հայերին հովանաւորելու եւրոպական միջամտութեան փորձը:

Որքան աւելի էր յօշոտուում թիւրքիան, այնքան նա աւելի էր տառապում նիւթապէս և այնքան աւելի էր ծանրանում կեղեքման սիստէմը: Երբէք այդ վերջինը չէր հասել այնքան հաւաոր չափերի, ինչպէս 70-ական թւերից սկսած, երբ Արևմտեան կեանքի ուժգին ցընցումները անդրադարձան նաև թիւրքաց պետական օրգանիզմի վրայ: Միջխտարիզմը, որի մասին յիշատակեցինք նախորդ յօդուածում, քաջից իր ետեկից անդիմադրելի կերպով բոլոր պետութիւններին, որոնցից. Տաճկաստանը ևս յետ մնալ չուզեց, չկարողացաւ: Մօակօփի կողմից սպառնացող մշտնջենական վտանգը կարող էր արդեօք անտարբեր թողնել սուլթաններին: Մի շարք աղետալի պատերազմներից յետոյ թիւրքայի առջև ցցեց միևնոյն ճակատագրական դիմումը, որ Ղրիմի պատերազմը դրել էր Ռուսաստանի առաջ կամ ընկճելու ու ոչնչանալու համաշխարհային գոյամարտի կրկնում, կամ թէ արմատապէս վերանորոգել, աճեցնել զօրքը, աճեցնել ծովային ու ցամաքային ուժերը, բարձրացնել հետևապէս երկրի արդիւնաբերութիւնն ու ֆինանսները: Բայց այն, ինչ որ աջուկեց համեմատաբար շարժուն ու առաջադէմ Ռուսաստանին, նոյնը մնաց ուսուպիա թիւրքաց վեհապետների համար: Ամբի բացակայութիւնը այդպիսի զուգորդեց ցեղական բացարձակ անկարողութեան հետ և ֆինանսները բարձրացնելու միակ ու գերագոյն միջոց յայտարարեց աւանդական թաւաւնը, աւելի հրէշային չափերով, աւելի անգութ ու բարբարոս...

Հարկահանութիւնը — պաշտօնական և անպաշտօն — ընդունեց միանգամայն անօրմալ բնաւորութիւն: Ամէն մի պաշտօնեայ միահեծան տէր եղաւ իր գործունէութեան սահմաններում: Տաճկական բիւրօկրատիան իր վարիներով, գայմագամներով ու զարթիաններով դարձաւ հարստահարութեան մի հրէշային մեքենայ, և Հայաստանը — լայնարձակ թատր այդ կազմակերպած աւագակութեան: Հայը տակաւին համբերում էր: Որքան վարժեցրել էին նրան համբերութեան ու քրիստոնէական խոնարհութեան — «անհաւատ» թիւրքը և իր հարազատ, արիւնակից կղերը: Սակայն նոյնիսկ անբան, որոճող ստրկի համբերութիւնն էլ սահման ունի. իսկ հայը այնքան էլ գերի չէր իր ճակատագրին: Թաւաւնի քաղաքականութիւնը օրըստօրէ ծաւալելով, ծանրանալով բնական անհրաժեշտութեամբ առաջացրեց դժգոհութեան փրկարար հոսանքը. խուլ տարտամ կերպով հնչեց Տաճկահայաստանի խորքերից հայի աղիողորմ գանգատը: Հայ ինտելիգենցիան ամէն կողմից արձագանք տուեց ժողովրդի ողբ ու հառաչանքին, և ազգային շըրջաններում տենդային կերպով սկսեց արժարժուել — գաղտնի կամ հրապարակաւ — հայոց ըէֆօրմների խնդրը:

Հայկական շարժման երկչոտ սկզբնաւորութիւնն էր դա, նրա խաղաղ, անարիւն շըջանը: Ներսէս Արթուրյանի գլուխ կանգնեց բարենորոգչական հոսանքին, և հայոց պատգամաւորութիւնը 1878-ին Բերլին գնալով՝ մտցրեց հաշակաւոր գաշնագրի մէջ 61-րդ յօդուածը:

Հայ ժողովրդի դժուար կացութիւնը ձևակերպեց Բերլինում և սրբագործեց դիւանագիտութեան հանդիսաւոր ծանուցումով: Բ. Գուռը պարտաւորուում էր «անյապաղ բարենորոգումներ մտցնել հայաբնակ վիլայէթներում և ապահովել հայ ազգաբնակչութիւնը քրդերից ու չէրքէքներից»: «Որպիսի ցնցում, որքան վառ յոյսեր առաջ բերեց այդ յօդուածը, թէև «անյապաղ» բառը իր տարտամ բնաւորութեամբ վաղօրոք ծանուցանում էր արդէն խնդրի վիժումը... Այդտեղ է հայկական ճգնաժամի բանալին: Տարիներ անցան, և 61-րդ յօդուածը մնաց ողբալի մի ֆիկցիա: Յոյցեր եղան — այս կամ այն պետութեան կամ հաւաքական եւրոպայի կողմից — ապարդիւն: Բերլինի դաշնագիրը փոխանակ դարմանելու հայի թշուառութեանը, աւելի ևս ծանրացրեց նրա վիճակը՝ բորբոքելով դահճի անգութութիւնը: Եւ հայաստանցին դեռ երկար սպասեց... Մարտիրոսութեան խարոյկի վրայ կապուած՝ նա իր արտասուլից աչքերն էր յառել դէպի եւրոպան և դէպի «ազատարար քրիստոնեայ աշխարհը», որ 150 տարի շարունակ անողորմ մտրակը ձեռին խարազանել էր քրիստոնէութեան անարգ թշնամուն: Այդ դր չեկաւ: Նրա հայրենիքը բացարձակ յափշտակութեան անպարէզ դարձաւ, նրա տունն ու տեղը աւարի մատնեցին, նրա տաճարները սրբապղծեցին, նրա ընտանեկան բոլոր սրբութիւնները ոտնատակ եղան, նրա որդիքը մալլ բանտերում հոգեմաշ եղան. նա գթութիւնն աղերսեց — քար ու ապառաժ մնաց աշխարհը, նա Աստուած աղաղակեց — բայց Աստուածն էլ անզգայ էր... Եւ իսպառ լքած, ամենադառն յուսախաբութեան մէջ, անէծքը շրթունքներին, նա դիմեց բոլոր ներշնչների վերջին ապաստանը — նա բռնեց արեան ճանապարհը...»

Հայի անել կրիտիքական վիճակի հանգամանքին միացան գաղափարական մօճէտները:

Ռուսահայ աշխարհում գրականութեան առաջնակարգ աստղերը՝ Պատկանեան իր սրտաուռ էրգերով, Բաֆֆի իր «Խենդ»-ով ու «Կայծեր»-ով, Արծրունի իր կրակող յօդուածներով բորբոքում էին հայրենասիրութեան տենդը և անդադար հնչեցնում ներական կոչը «Դէպի Հայաստան»:

Հայ երիտասարդութիւնը այլե՛րևում էր: Արարատեան աշխարհից մինչև Վան ու Էրզրում տարածուում էր մտքերի այն փրկարար խմորումը, որ նախանշանն է յեղափոխական շարժման: Անմոռանալի օրեր էին: Վարդագոյն յոյսերի, անհուն, մասսային խանդավառութեան օրեր: Իդէալի իրականացումը այնքան մօտ էր թւում... Եւ շարան-շարան հրապարակ իջան ինտելիգենտ և ժողովրդական գործիչներ՝ վառելու ազատութեան մեծ հրդեհը, որ պիտի հալեցնէր, լափէր ստրկի ամրակուռ շղթաները:

Երիտասարդ Հայաստանն էր դա: Կազմարական վսեմ թռիչքների, ազատ մտքի և ասպետական զգացմունքի Հայաստանը: Սուրբ չէր ազատութեան մարտնչողների բանակը, բայց մեծ էր հաւատը, ուժեղ էր իդէալը հրապարակ: Վառող տարրերը ինքնաբերաբար ծնունդ էին առնում տանջանքի աշխարհում իրարից անկախ, ցիր-ցան վիճակի մէջ: Յեղափոխական կազմակերպութիւնը եկաւ ի մի ձուլելու նրանց: Գժաւարին պարտականութիւն: Այնուամենայնիւ նա կատարեց իր պարտքը, անդուլ մաքառելով արտաքին ու ներքին թշնամիները:

դէմ մի բացառիկ, դժոխային միջաւայրուով, շրջապատուած ամէն կողմից մարդակերներով: Տասը տարւայ ընթացքում, շնայած անօրինակ խոչընդոտներին, հայ յեղափոխական շարժումը ունեցաւ փառահեղ արտայայտութիւններ: Որքան հրաշալի տիպարներ արիութեան ու անձնուրացութեան և որքան խիզախ, դիւցազնական կռիւներ: Որպիսի՜ անդուհալ, որպիսի ցայտուն կոնտրաստ «Պառաւ» ու Երիտասարդ Հայաստանի միջև...

Եղան վայրկեաններ — դու, շառաչալից — մահուան պայքարի այդ տասնամեակում, երբ նոյնիսկ այդ պառաւ, զառամեալ Հայաստանը հանդէպ իր զաւակների հերոսութեան և եւրոպական փութկոտ միջամտութեան՝ փառաբանում էր ու սիրով գրկում յեղափոխութեան գաղափարը. թշնամին սոսկում էր «ոայայի» անվեհեր թուխքներից՝ մարտական մի սառսուռ էր անցնում հայութեան ջղերով, և նա հպարտ էր... Բայց անցան այդ հանդիսաւոր վայրկեանները... Եւրոպան սպառնաց ու չխածնեց: Անգլո-ռուսական հակամարտութիւնը հասաւ իր գագաթնակէտին: Լօբանով յայտարարեց բացարձակ ձեռնպահութիւն և խրախուսեց հայերի դահճին: Քրանսիան համակերպեց Լօբանովին: Միւս պետութիւնները նոյնպէս ձեռնպահ մնացին: Անգլիան չխիզախեց միայնակ միջամտել: Մայիսեան ծրագիրն էլ (1895-ի) քնեց, բոլոր խոստումները մնացին խոստում: Դրա փոխարէն առաջ եկաւ հայութեան անվերջ մարտիրոսութիւնը և հայի հայրենիքը դարձաւ արեան ծով... Սուլթանը քաջալերած՝ առաջ տարեց հայաջինջ քաղաքականութիւնը և ուժգին մի հարածով ուղեց ջախջախել հայութիւնը ու խաչ դնել հայկական հարցի վրայ: Բայց դա պարտնք էր: Արիւտը հսկան նորից կազդուրում է ու նորից արձանանում իր հակառակորդի դէմ: Արէժի ու ատեղութեան ամբարած թոյնը ելք է որոնում, և շատ չի անցնի, երբ նա յաղթական մի սլացքով կը յաջողէ — հակառակ տաճկի հայաստան ջանքերին, հակառակ եւրոպական ձեռնպահութեան և status quo-ի ծանուցումներին — վերջ դնել վայրենի, հորդայական վարչութեանը և արեան ու սարսափների հայրենիքում սկսել մի նոր դարագլուխ...

Չ Է Յ Թ Ո Ւ Ն Ի Ա Ս Տ Ղ Ը

Անոքերս ծոցս, աչքերս երկինք,
 Լուսամտիս մտ, տխուր, յուսաբեկ,
 Նստած կը դիտեմ հորիզոն հեռի...
 Որ բոցերու մէջ կայրի, կը վառի
 Ա՛հ, ի՛նչ է այդ բոց, ուրկէ կը ժայթքի,
 Արևին ճաճանչք, վերջալոյս կ'ընկճի,
 Կ'սքողէ կապոյտ երկինքը պայծառ,
 Հորիզոն կամար կը ձուլէ իրար,
 Նժդեհի աչքէն արցունք կը քաղէ,
 Աքտորւած սրտէն արիւն կը քամէ:
 Հայաստանն է այդ, հայրենիք անբախտ,
 Հայու բունն է որ կ'ընեն քարուքանդ:

Բայց հոգուս անհուն, սև անյուսուցիւն,
 Կը վաճէ խեղճ կայծ մը պլաշտուն,
 Երբ հոգուս անհոգ, անհաշուութեան խոր

կը ցոյայ մերթ վառ, մերթ աղօտ, պղտոր:
 Բայց ի՛նչ է այդ կայծ,
 Որ սև, մթազգած
 Թուխպերուն հանդէպ
 Կուելով ստեպ՝
 Ճգնի լայն, արձակ
 Եթերի մէջին,
 Ազատ, համարձակ
 Շողալ իւր կարգին.
 Յոյց տալ աշխարհին,
 Որ չ'ուզեր յաւէտ
 Ի ծոց խաւարին
 Շիջանել անհետ:

Տանն Ռուբինեանց
 Աստղն է այդ կայծ,
 Որ դարերէ ի վեր գարշ մթնոլորտում
 Գերի կը հիւծէր, մօտ էր իր ընկճում:
 Բայց յանկարծ օր մը սթափեց Ջէյթուն,
 Պարզեց կարծիր դրօշ իր հպարտ գլխուն:
 Սուրբ ուխտը ըրաւ վրէժխնդրութեան,
 Օրինակ տալով խրոխտ քաջութեան:
 Ամիսներ անդուլ կուեց անվհատ,
 Մէկի տեղ հարիւր դրկեց «ի դրախտ»:
 Այդպէս խորտակեց դարաւոր կապանք,
 Այդպէս ազատեց հայուն պատիւ, փառք...

Յայնժամ Ջէյթունցին հպարտ, մեծազօր,
 Արձակ-համարձակ ճախրէր սար ու ձոր
 Երգելով դարթ ազատ կեանք կամ մահ
 Կը յիշէր զոհերու յիշատակն անմահ:

ՉԱՏԻԿ

Թ Ի Ի Բ Գ Ի Ո Յ Թ Ո Ւ Բ Ը Ը

ԱՐԹՈՒ. ԹԱՇԱՅՈՒ ՄԱՀ. — Արթին փաշան ալ հողը դրին:
 Անքնի տարիներս ազգային զործերու մասնակցութիւնը
 ուղղակի սուլթան համդի խորհրդով — իր հեղինակաւորութիւնը
 ազգի կամքին ժայռին զարնելու յանդուհալ ու փառասէր փորձը,
 կը թելադրէ մեզ ըսել ըսնի մը խօսք անոր մահուան սուլթի
 և բեւեռաբոկ իր ամուսնը յեղափոխական պողպատով:
 Արթին փաշայի մահը ազգային սուգի մը հանդիսաւորութիւնը
 չէ՛ կարող ունենալ, զի իր պաշտօնին բերումով, շատոց արդէն
 ապահարզան ըրած էր ազգային զործերու օգտաւէտ մասնակ-
 ցութիւնէն և իբրև ղիւսմագէտ «պետական պատժաւ» բոլր-
 րովին օտար չէր անոր սրտին վրայ ազդել:
 Կրնանք ըսել թէ Արթին փաշան թէ՛ շատ կը պատկանէր
 48-ի ազատամիտ և ազատասէր սերունդին, որոնք տեսած ու
 մտիկ ըրած էին Մեջլէս, Կիզոն, Լամաթիմը, Հիւկոն, — որոնք
 ըստ Օտտոմանի «Վաստաւածացեալն» խօսքը: Այդ դարու իտեա-
 րական մարտը հասանքին մէջ մկրտած սերունդն էր որ, վերա-
 դարձին Պօլսու, ազգային սահմանադրութիւնը դարձնեց այնքան
 ծարախիկ, որքան կորովի ձեռքերով, և այսպէս ընտանաւորու-
 տական կառավարութեան մը մէջ, ազգային վարչական ուս-
 կիական անամո՞ծաշնորհում մը հաստատեց, ազգին պարգեւելով
 Նախածնութեան ոգիի և ինքնագիտակցութեան անաշխտ քայլերը:
 Ազգային սահմանադրութիւնը որ քառակուսի անիւններով կառո-
 վան էր թիւրք պետութեան աչքին — կը պարունակէր բարի սերմը,
 ծրագրու Նախադրում էր: Անոր զօած ակօսներուն մէջ ծնեցաւ,
 ծրագրեցաւ հայրենասիրական գրականութիւն մը, ո՞ր քառակուսի
 սահմանադրութեան լծւած ամբողջ ազգը, լուստես ծակատաքի
 մը մտնում ու ընազում կը հրէս որոշ և փտաս նպատակի մը:
 Այդ տարրերակօրէն սքանչելի սերունդէն մտող չէ մնացած
 փակած է այնու այդ հերոսական և փառաբան զորքերը:

պելս, որ տուաւ ազգին եւ պետութեան այնքան ակամաւոր անձնատիրութիւններ եւ որոնք կրցան, պետութեան ծառայելով հանդերձ, ազգին ազգայնով աւ շահագրգռել, եւ իրենց բոլոր ժէստերուն, մտածումներուն մէջ հայրենասիրական խազ մը դնել:

Պէշիկթաշլեան այդ ժամանակի պատկանող կամ ծիծառ ազգային բանաստեղծն էր, որ ոգեւորւած այդ սերունդի իտէալական միտքորտէն, կը քնարերգէր «հայրենեաց ճովիկը», «հայրենեաց թռչիկը», «Մահ քաշողը ողորմ»:

Հետաւոր ու սքազան յիշատակն է որ կը մայ մեզի այդ ժիր եւ տարարին հիներէն, որոնք գիտակցութիւնը դրին մեր հոգիին մէջ եւ մեր շիջեցուն տւին անդրադարձ գործողութեան վարժութիւնը:

Արթին փաշան այդ սերունդին վերջինն էր, քայքայ կրնար ըսել իրեն համար last but not least — վերջինը քայքայ ոչ փոքրագոյնը, — որովհետեւ համեմատելով Օտեանի, Ռուսիանի, Մերիլիէնի եւ ուրիշ համակրելի դէմքերու հետ, շատ փոքր կը մայ անոնցմ: Դիւանագիտական ցուրտ պարսպունքներէ, լեզուի երկդիմութիւններէ ցամքած սիրտ մը, իր գործերուն մէջ չէր կրնար դնել այն թռիչք եւ ոչ ալ կրնար լարել ազգային աղեղն ինչպէս մարգարէական ժիրքնցը:

Իր ընտրած ասպարէզը կը պահանջէր արդէն ազգային զգացումէն մեծ գոհողութիւն մը ընել իր փաստսիրական վերելքին մէջ, եւ աւելի երեսնաւոր ըլլալ: Իր քուր սէրը, ծգորութիւնը դէպի հայ ազգը կը կայանար իր գերդաստանին սուսնական եկեղեցասիրութեան, դպրոցասիրութեան մէջ, Կախմախմախութեան, շէն ու պայծառ մասի, խաչախաչախաչութեան, խաչահանգիստներու եւ ուխտագնացութիւններու:

Ներքէս պատրիարքի օրով ունեցաւ կ'ըսեն, թարուն դեր մը, զուցէ պատկանելով մեծ պատրիարքին հմայքի: Ազգային գործերու պատահական հետաքրքրութիւնէն զատ կամ իբր աւելորդ մշակում մը իր թիւրք պաշտօնիւթեան հարախն վայ, Արթին փաշան, Տատեանց գերդաստանին օսմանեան գաղուն աւանդական հաւատարմութեան հետեւելով, հաւատացեալներու հրամանատարին, ինչպէս մեծել տղայնորդի մը, ծեղրին մէջ, կարելի է ըսել, «հեակ» մըն էր:

Տատեանց գերդաստանը, որուն վերջին արտասփայլ ներկայացուցիչն էր Արթին փաշան, Ալէնէն եկած էր: Տատեանց ս.մ. աւախին անթիւ ծառայութիւնները յայտնի են օսմանեան գաղուն: Բայց այն քաղաքը, որ թիւրք պետութեան այնքան քարտիւրներ ծնած է, չի ինչպիսեցաւ ապերախտութեան ծեղրը բնած արհուուուշտ եաթաղանէն:

Արթին փաշան, մեծած իր մէջ սքազան որդը, դատապարտելի կոնստիտուցիոնով մը իր դիւանագիտական բոլոր ուժը եւ շարահիւրութիւնը գործածեց փրկելու ողորդած ծեղրը: Իր արշակցութիւնովն էր որ սուլթան համիդը շանաց խեղդել չայատանի արհեստի բողոքը:

Արտաքին գործերու մ'իւս թէ շարք ազգին համար թոյն խորտակած կամք մըն էր, սկեպտիկ եւ վատապաշտ: Չը թողուց ոչ մէկ շօշափելի յիշատակ իր ազգակիցներուն. իր հայրը չայատանի պատմական աշխարհագրութիւնը փորագրելուս, ազգին հարսւած փառքերը վերակենդանացուցած էր, որդին սեւ շրջանակ մը անցուց այդ յիշատակին բողոքը:

1898-ին, իր թէ սուլթանի արիւստիւտութիւնով, յեղափոխական Դաշնակցութեան հետ բանակցութեան մտաւ, որպէս զի ազգին եւ փառքի հին մոլուստը մը հաստատուի:

Արթին փաշան կ'ուզէր, ինչ ալ ըլլայ, յաշտոցեւ սուլթանին ծրագրեր, մանաւանդ որ ան ժամանակները, խուլ եւ անուսակ մրցում մը կար կարգ մը դերք ունեցող ու շունչող հայերու մէջ, սուլթանին քարծրագոյն շնորհին արժանանալու: Տեսակ մը գաղտնի ընկերութիւններ կազմած էին թիւրք եւ հայ միասին, սուլթանին սարսափը շահագործելու համար: Արթին փաշան, հակառակ միաներուն, ուղղակի Դաշնակցութեան դիմեց, իբր մեծագոյն կուսակցութիւնը: Կաղաքական ժողովի ատենապետութիւնը տեսակ մը անշահախնդրութեան երիւյթը կուտար իր թատերասրահին:

Իր թիւրքակցութիւններուն մէջ, որոնք ոչինչ կը խոստանան եւ շատ քան կը պահանջեն, կը շանայ համագել, խրատուլ Դաշնակցութիւնը, որ հանդարտ մայ, իսկ ինչ պիտի աշխատէր «բանասիրելից եւ արարելից վատութիւն փոքրել» սուլթանէն, շնորհիւ ազգին հանդարտ վարքին եւ հայ բոլորիներուն խոհեմ ու ազգասիրական ընթացքին:

Չենք կարծել որ Արթին փաշան Դաշնակցութիւնը իր կարգին լծելու ծիծառն էր յաւանդութիւնը ունեցած ըլլար, քայքայ սրտանց կը բարձրար, որ յեղափոխական Դաշնակցութիւնը սուլթանին նկատմամբ կու տրամադրուած փառքեղան համակ մը գրէր իրեն: «Օր ու գիշեր կ'աշխատեմ, կ'ըսէր, ազգը սուլթանին հետ հաշտեցնելու համար» կամ ուրիշ խօսքով կը փորձեր սուլթան շամիդի դեւերը հանել:

Բացարձակապէս վիժեցին բանակցութիւնները: Դաշնակցութիւնը իր սկզբունքին մէջ անյողողող մասց մնչու վերջ, զգալով որ փաշան զիտակից կամ անգէտ միակողմանի գործիք մըն էր սուլթան շանին կուսած չափ իր իր մընի մը ձեռքը: Իսկ շար լեզուներ կը փոխապէս արդէն որ փաշան գրանի ներս է: Բանակցութիւններուն հետ կը շարունակէին շարքերը, որոնց համեմատ փաշան իր նամակներուն կուտար ծիծառն եւ հակակշռող ոճ մը, տարտամ եւ թէպէս խոստումներով որոնց սուղել կարելի էր հարցանիչը շարել ինչ մարդու մը արհի խրատներով ու պաղատանքներով միշտ խոյս տալով անձնական երաշխաւորութիւն, որոնք ազնիւ դատի մը ծառայող մարդոց համար միատուն եւ անհիաստուն կը թլին միանգամայն: Արթին փաշան կը շանար «հախիկն յարաբերութիւնները» վերահաստատուել, արտը յեղափոխական լուծքին առջևը փոխադրելով: Ինչ, որ ցուազին յուսահատութիւնով մը կ'ըսէր. «ապրած ըլլալով թիւրքերուն մէջ, գիտեմ սեղալին ծակուծուկը, մ'ի ս տ է ր... չէնք հասկնար թէ ինչպէս հնար էր քացւած վիշտ լեցնել այդքան հեշտ կեցողութիւնը: Սուլթան շանի, որ յաշտեցաւ ամբողջ երիտասարդ թիւրքերու կուսակցութիւնները վարկաբեկել, զանոնք անպատիւ մեղքներով դատաւից ընելով ինչպէս իրաւացիորէն կ'ըզան ու կ'անտանս այսօր քանիմաց թիւրքերը յոյն աշխատանքաւ ընել: Տայքեր համար: Փաշան, իր քանով, կուսակցական կամ շահու դիտումով չէր որ այդ ազգերստ «պարկեշտ մեղքորդի» դերը ստանձնած էր, այլ իր աւելորած մտրուքի փորձառութիւնը, իր... ազգին սէրը կը միշտ զինքը: Կը գտնագտներ եւ կը վշտանար յոյսիսկ որ Դաշնակցութիւնը շատ անողող եւ խտտապահանջ էր «հաւասարէ հաւասար կ'ուզէք բանակցել սուլթանին հետ» կ'ըսէր:

Եթէ ծերունի փաշան Դաշնակցութեան կամքին առջև գիտակցելի եղաւ, չկրնար իր «ազգասիրական» իղծերը երագործել ոչինչ կրցաւ ընել նաև քաղաքական ժողովի ատենապետութեան պաշտօնին մէջ: Կ'ըսուէր որ «հարգալի կանթեղն», ըլլար այդ շար ժողովին, որու անտանսերը տեսակ մը մարդասիրանսիր դարձած էին: Իրտիկակն եղաւ անոր: Արթին փաշան ու Օբմանեան վերջինը սիրուն ոսկոր մը չէր առջինին համար երկու ամուլ սիրահարներ եղան, երկու տարբեր ուղիւթընով, մէկը raison d'Etat-ի սկզբունքին վարկուած անաքեկելով վարչութեան անդամները, միւսը ստանձնարանական թիւրքերու ղեկավարութեան: Ու բանագրուանքին մէջ զակցի պիտեք որո՞ւսով եւ ն ի պ ո տ ո լ թ ի ա ն ծիպիկութեան անտը մոցնելով պատրիարքարանի մէջ: Ոչ մէկ ոչ միւսը չեղաւ պատրիարքարանի «արի» ոգին:

Չենք կարծել, սակայն, որ սուլթանը սիրէր այդ մարդը — որուն դէմը թէեւ թրքական կաղապար ստացած էր — ինչպէս շիրքի ամէն հայ: Իր քթամոտութեան մէջ, որ եղծուազործութիւնէն ուրիշ քան չգիտեր, կը քանցեցնէր անոր մտքի հանքը որուն միշտ կարօտ էր, ատող համար Արթին փաշան վերապրեցաւ այնքան յախարաքական նաւաքեկութիւններէ ետքը, ոսկեգոծելով շարագործ խալիֆայի մտքի պարսպութիւնը:

Հակառակ իր տաղանդին ու կարողութեան չի հասաւ իր ասպարէզին ծայրը, շիրքաւ արտասիր գործերու նախաբարութեան քաղաքական հագնի, զի կ'անտը էր ինչ. պարզ խոհարարական եւ քարտուղար մասց, թէեւ «քանսինց տարակալ մէջ կ'ըսէ յուսական թերթ մը, չէ եղած արտաքին խնդիր մը կամ պաշտօնաթուղ մը, որ Արթին փաշայի ծեղրէն անցած, կամ անոր խորհուրդը արուած ըլլալ»: Հիմնակն գիտէր դիւանագիտական ոճի նրբութիւնները, այնպէս որ արտաքին գործերու դիւանատան մէջ իր ծեղրին տակ քաւական աշակերտներ մարդ եղան:

Անուրջ ու անհրապար եղաւ իր կեանքը. մեծ աղճուկ կը հանէր անշուշտ եթէ թիւրք մը կուս ըլլար: Հագել գերեզմանին վայ «պահպանիչ» վերջացած, թիւրքերը շուտով մոցան անոր ծառայութիւնը եւ անտուր, ինչպէս չեն ծանցար Դազէզ Ամիրայի անունը: Գեափուր մը, այն պէտք է ծառայէ փատիշահներուն մասով միշտ ստորակ — քայքայ պէտք չէ անմահման: Անցիշահար հայ ժողովուրդը պիտի պահէ շորէն անունը յիշատակել, իր սրտին ու պատմութեան մէջ անկէն մը զուցէ քուսազոյն տեղը շնորհելով այդ խորթ գաւառներուն, ան փառաւոր մահերուն քով, որոնք ազգին հոգին մարմնացուցած են: Յակիք փաշան ողբումը «Կենդանական մեծ ծառայութիւնը զբաւ օսմանեան գահուն, մանաւանդ սուլթանի անձնական գահուն, որ ոչ մէկ թիւրք կ'ընէր. իր ժառանգները, եթէ չենք սկաւիթ, Պոլսոյ ժամերէն մէկուն ծանրագին շուրջառ մը ըննել ունին Անս մահավերջիկ երախտիքը ու ըլլաւ այդ մարդը իր ազգին եւ սակայն հայ ժողովուրդի պանթէօնին մէջ... ան ալ տեղ ունի: Միք ազգային ցաւերուն ու իրաւունքներուն ոսկի ունեցած ենք պետութեան հայ ծառայողները, որոնք գոյութիւնը թշուաքար է մեզի համար: Նուրեան, Մէֆէթեան, սատկելու Բարդուղիմէոսը, որուն օրհնութիւնը սեւ անէճքի կը փոխել, եւ բոլոր

պաշտօնակալն չըլիրը, զամազան անխտոմանելի շահերով դէժ մն ազգային ունէ շարժման: Յնդափոխութեան մէջ երբեմն ձայներ քարծրացան խաշակութիւն մը բարդուող կամ անավարժութիւն մը նստատեղու այդ դասակարգին դէմ, որոնք իրենց խելքով եւ ոչ արհամարհելի ձրքովը կը ծանուցեն մարդասպան քաղաք իրենց դժգոխա շարժման իրենց գլխուն վրայ: Բողբովն անհիմն չէր այդ արիւնոտ միտքը, զի տեսանք այդ պաշտօնակալն մարմինն տխուր ու բացասական դերը ազգային ճշգրտաժամուն, որոնք չարը գործածեցին իրենց հաւատարմութիւնը: Անոնց... անմահութիւնը մեր մասն է: Ամէն անգամ երբ փոսած տանձի պէս կ'իջնայ անոնցմէ մին կը բացագանչենք.

Felix opportunitate mortis.

«Բարեկալտե՛ր մահեր, որոնք մեր սկիւմայ շարահնդութիւնը կը գրգռեն:

Արթին փաշա իր փառասիրութեան մէջ յուսակալը մնաւ, օտմանեան գահուն գնահատելի ծառայութիւններ եւ ազգին պատմական ու թատերական ցոյցեր միայն բնելէ ետք: Չենք համարձակիր ըսել ինչպէս բերաննին վրայ վնաս ըսելու նուբար փաշայի մասին թէ իր ազգին կակիծէն մնաւ:

Իր միօրինակ կենսքը չի ներշնչէր նոր սերունդին ան սրտոտ իսանդավանութիւնը, չի ցուցնէր ան թափանցուն հմայքը եւ չ'արտայայտեր ան նախաձեռն իտէլականութիւնը, որ ունեցան իր ժամանակակից դէմքերէն շատեր, սահմանադրական գործիչները «անկշեռել» են մեծ հաւատարմոյնը:

Արթին փաշան ունէր թրեւս քարեցակամ տրամադրութիւններ դէպի ազգը, առանց այն լըբութեան, զոր ունէին շատերը զուցէ զո՛ր մըն էր դիւանագիտական «կուրք»-ին, որուն անսիրտ նկատումներուն տաճի ստիպւած էր իր սիրտը գլխուն մէջ կրելու, պարզ հանդիսատես ըլլալով ազգային յուզումն ու խոտովին:

Թրեւս մինչեւ իսկ հանրային խղճին առջև եր դատաւարութիւնը մեղմացուցիւ պարագաներ գտնէ, քայք պատմութեան էջերուն մէջ յաւէտ սեւեռուն պիտի մայ սա մասունքը դատարկիքը, Արթին փաշայի նախարարութեան օրով, սուլթան չամիւր, որդագործութեան Մողղըք, Հայաստանի մէջ չլուսած շահմուտ ոճիւնները գործեց...

Փափաքելի էր որ իր մահը աղոթ օրայ մը վերջալսը եղած ըլլար, իր թշուառ ազգէն անմահանալէ առաջ...

Թշուառութեան քովին մէջ ազնւացած ամբողջ ազգի մը սրտաշարժ վերանմուծիւով ըսինք դարձեալ իր գերգզմանին առջև: Հողը թելի է գայ վրան...

* *

ՓրՄԱՍԱ ԾՆ ԹԻԻՐ-ԲԻԱ. — Փրանքո-թիւրք մէջը եւ միջնադար, հետեւանք Փրանսայի քանի մը նպատակներու թրեքքայէն առնելիքին եւ Փրանսայի ազդեցութեան Արեւելքի մէջ խաւարելուն խաղաղած է այժմ: Բիշ օրէն հոմաստան եւ Միւնիքի պէլ կը վերադառնան իրենց պաշտօնատեղիները:

Սուլթանը, որուն արիւնոտ երեսը միշտ փայփայանքներ վայելած է դարավերջի վերահասանքէ, առաջնորդ արհամարեց Փրանսայի պահանջները, յուսալով որ շարաշահ պետութիւններ պիտի վահանեն զինքը: Եղուելով միջազգային անորոշ դրութիւնէն, Փրանսան անիթ սեպեց վերահաստատել Արեւելքի մէջ իր պատիւը եւ համբաւը, որուն վրայ գերման արժիւղ-իր շուքը ձգած էր: Սուլթանի ժպիրտութեան եւ յամառութեան վրայ Փրանսական նաւատորմը նոյնմբեր 5-ին առանց դիմարտութեան գրաւեց Միտիլինէ կղզին, մինչեւ որ մարդասպան իսպիւնիան Փրանսայի պահանջներուն գոհացում տար: Ինչպէ՛ս ինկպին-Լորանտոյի անսելիքներէն զտա, Թիւրքիոյ մէջ Փրանսայի պաշտպանութեան տակ եղած քարեգործական հաստատութեանց և պարոցներու օրէնքով ճանչցուիւ են, վերջապէս յարգել կապի ի տիւր և սիօնով ձեռք բերած Փրանսայի դարաւոր իրաւունքները:

Ղուած է որ սուլթանը ծեծով խօսք կը լսէ: Փրանսան ըսնի ուժը գործ դրաւ, սկսուա րանս-ն, որ բաղաբարկանութեան վերջին խօսքն է զտ Ռիշլիէօի:

Սուլթանը, լսածին Միտիլինէի առումը, ամա՛ն, ըսաւ Փրանսայի եւ անոր պահանջներուն լիովին գոհացում տաւ: Ժամը ժամին: Սուլթանի սեւ օրին ոչ որ տէր եղաւ: Կիցո՛ւ մերծեց միջամտեւ, թէև իր տղան այդ ըսպէին Պոլիս դրկած էր Ալլահի շուքէն աւար բերելու նստար:

Նայն պահուն յունական տորմիդը սուլթանի հրամանով կայցելէր օտմանեան նաւահանգիստները Էգեան ծովուն մէջ: Իզմիտ սցին՝ ճնի յայնքը «գիծներով» ողջունեցին, իրենց խօսքով իկինն «սուրբ նաւատորմիդը»: որ հելլենականութեան մեծ ապագան ունէր իր կողերուն մէջ:

Հայոց Հարդեբուն, Եւրօպայի կոմսէրտը անգոր եղաւ քան մը ըսել սուլթանի դէմ: Դերմանիսն կը նրաժարէր իր սրնգը ամենէ: Փրանսան իր ձեռներկցութիւնով կը իր նաշուը սուլ

թանին հետ առանձին կարգադրելու յանդուգն քայլով նախընթաց մը կը լըստեղծէր Եւրօպայի եւ Թիւրքիոյ յարաբերութիւններու մէջ: Սուլթանը որուն ուժը Եւրօպայի անհամբարշի համաձայնութիւնն էր ասկէ ետքը պատասխանատու դիրքի մէջ կիցնայ առանձին առանձին պետութիւններու հանդէպ, այնպէս որ այն միջամտութիւնը արեւելեան հարցին մէջ զգալի յնարքում մը ստաւ կը բերէ, քարացած աւանդութիւն մըն է որ կը խախտէ: Փրանսան իր քայլով, որուն մարդասիրական ստեղ մըն ալ տւին, ամբողջ աշխարհի «արաբօ»-ին արժանացաւ, թէև վերջը շարդարացուց նախերգանքը:

Փրանսայի գոհացումը որքան պատրանքներ ունի իր մէջ, յետոյ տեսնի զուցէ, զի Թիւրքերը աւելի թշամի պիտի ըլլան այժմ քան երբէք:

Սուլթան, իբր ցամ անասուն, լաւ գիտէ թէ ի՞նչ արժէ իր խոտուը: Լուր կայ որ ի վրէժ անշուշտ — երբեմն դաշնակցութեան գոգը կուգէ նետուել ըսելով Կիյօմին, ինչ որ կուտ ընծի Եպէլարին:

«Տաճարէ զես, մտացածը կը նախնամ»... համարմութեան հրաշալի խալիֆան իրաւ Թիւրքի գլուխ ունի...

Մ Ա Մ Ո Ւ Լ Ի Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

* * *

Տաղանդաւոր հրապարակախօս Իւրբէն Գոհիէ իր «Հայաստան» վերնագրով յօդուածի մէջ (Աւրօթ 8 հոկտ.) հետեւեալն է գրում.

... Տաղանդակներ եւ ազնաների ծայրայեղութիւնից, կրկարատեւ սարսափից, յուսահատութիւնից երկհոտ դարձած հայերը դիւանապիտութեան վրայ են դրել իրենց յոյսերը:

Դիւանապիտութիւնը, իբրև պահպանողական շահերի եւ կառավարութիւնների գործակատար անհրաժեշտարար թշնամի է նրանց: Արպէս զի դիւանապիտութիւնը նրանցից միամտօրէն սպաւած միջամտութիւնը անէ, պէտք է որ եւրօպական կառավարութիւնները նեղը ձգուին մի կարգ դէպքերով:

Նրանք, որոնց շահը պահանջում է այդ նրանց պարտքն է՝ առաջ բերել այդ դէպքերը:

Ի՞նչ է պէքերը գրգռելու համար, ինչ որ էլ լինին նրանք, դրամ է հարկաւոր միշտ:

Այսօր դրամ է պէտք Ասիայում գինիւր համար հայ ազգի մնացորդները, որոնք վճռել են պաշտպանի իրենց, որպէս զի վրէժխնդիր լինեն նահատակածների համար, դրամ է պէտք, որպէս զի քաջներին միջոց արւի ծաւալելու իրենց ժողովրդի եւ բոլոր ժողովուրդների դատին:

Անպիլայի, Գերմանիայի եւ ուրիշ անդերի գէնքի եւ ռազմավթերքի գործարանատէրերը կարող են միշտ ամենալաւ նրացաններ եւ անհամար փամիւռչաններ անցկացնել բոլոր մաքսանների եւ ոստիկանութիւնների միջոց, եթէ բաւարար չան աղստովի նրանց:

Դրամ, շատ դրամ — այդտեղ է ամէն բան:

Աշխարհիս երեսին նայր կան, որոնց մօտ փողը չէ, որ պակասում է, որոնք խեղդուած են փողի մէջ... Նրանք ծախաւում են հողայններով, երբեմն միլիոններով երաժշտութիւն, նկարչութիւն կամ բժշկութիւն սովորեցնելու երկրից վտարած նրիտասարգներին, կամ մի քանի գորոյններ պահելու, եկեղեցիներ կառուցանելու... Արքա՛ն պարապ անը շայլուած ոսկիներ, որոնք կարող էին այնքան յարիք ծնել...

Այն հայ կապիտալիստները, որոնք չեն ուզում հասկանալ այդ, պէտք է, որ նրանց կորովի հայրենակիցները համոզեն նրանց ունէ փաստի միջոցով... Հայ ժողովուրդը փրկելու իրենց յոյսը պարտքը չկատարելով՝ նրանք համարեայ եղալապատպանութեան յանցանք են գործում... Ի սէր իրենց անձնական շահը գրատութեան նրանք կատարում են միեւնոյն ոճիրը, ինչ որ Ֆելիքս Պօլսները, Հանօթմները գործում են իսկ օտմանեան ոսկիների:

* * *

Առանձին ուշադրութեան արժանի է ժ ա ն Թ օ ռ է ս ի առաջնորդող յօդուածը (La Petite République 7 նոյ.)

Մի բան, որ լաւ հասկանալի չէ պ. Դեղատէի ձափի եւ քաղաքականութեան մէջ — ասում է հռչակաւոր պրիւրսը — այդ այն է, որ նա հնարաւոր է կարծում գտնել հայկական խնդիրը արեւելեան խնդրի ակոտղում թիւնից... Ի՞նչպէս պ միմիայն ճիշտութեամբ, որ Հայաստանի հարցը կարող էր հրապարակ գալ այդ (Ֆրանս-թիւրքական) ընդհարումի միջոցին...

Անկարելի է, որ հայերը չընդունին Ֆրանսիայի այդ կորովի ընթացքը իրբեւ մէկ խոստում մէկ երաշխաւորութիւն: Նրանք ուրեմն այսուհետեւ աւելի անհամբեր պիտի լինին դարչելի լծի տակ եւ եթէ չնորհի ֆրանս-թիւրքական ընդհարումին՝ նրանց պահանջները աւելի զօրեւելու ազգուէ կերպարանք ընդունին, եթէ նրանք աւելի ուժգնօրէն կողանեն Եւրօպային եւ նոյնիսկ Ֆրանսիային, որ Բերլինի դաշնագիրը անողադար գրեւում, իսխաւում է, Ֆրանսիան թող պիտի սա՛յ արգիօք սուլթանին ճնշել ու խելդել արեւան մէջ մի արգարայի շարժում, որ նա, ուղի-չուղի, պիտի քաջալերէ: Դա կը լինէր մի ճշմարիտ ոճիր:

Ի՞նչ միջոցներ է ձեռք առել պ. Դեղատէ, որպէս զի Հայաստանը չմասնի գիւտանալիտական մութ կօժրինացիներին Ահաւասիկ ճգնաժամի հրատապ կէտը...

Բայց աւելի քան յուզիչ ու ծանր կը լինէր, եթէ պ. Դեղատէ Ռուսաստանին միայն թողնէր հայկական խնդրի անօրինութիւնը... Մենք արդէն գիտէինք, որ Ռուսաստանը փորձում է օգտուել ներկայ հանդամանքներից եւ ստրածիկ Հայաստանի վրայ մի տեսակ մեռնաշորհալ հովանաւորութիւն:

Ռուսաստանը թիւրքերին էր յանձնել հոգը՝ սպաւելու նրան ամենաառնական հայ տարրերից եւ այժմ փորձում է սանցնել իր սպիւցութիւնը հայ ժողովրդի մէջ, որ թուրքացած է կոտորածներից եւ յոգնած Եւրօպայի երկարատեւ անուշադրութիւնից:

Իշխան Լօբանովին համակերպելու համար՝ Հանոսոն մասնակց հայերին թիւրքական դանակին Լօբանովի յետնորդին համակերպելով՝ Դեղատէն պիտի մասնէ՞ արգիօք հայերին Ռուսաստանի միայնակ հովանաւորութեանը:

Պ. Դեղատէ իրաւունք չունի ասելու: Ոչ, նա պատկանում է Եւրօպային, որի մասն է Ֆրանսիան:

* * *

Դ է տ ու ը ը ն ե լ գ ը Վ օ ն ս տ ա ն, Ֆրանսիայի նախկին պատերազմը ԼաՏէի համաժողովի մէջ զեռեղել է Temps լրագրում մի ուշադրաւ յօդուած «Աուլթանը եւ ԼաՏէի իրաւարար ատեանը» վերնագրով, որ աւելորդ չենք սեպում քաղաքօրէն առաջ բերել այստեղ Պ. Դէտուրնէի խղաղասէր բարեկամները հարցնում են նրան՝ ինչու արգիօք Ֆրանս-թիւրքական վէճը չի կարելի յանձնել վերոյիշեալ ատեանին: Եւ պատկառելի իրաւագէտը, որ ստիպած է շափաւոր տօն գործ ածել մանաւանդ Temps-ի պէս կիսապաշտօնական օրգանում՝ հետեւեալ պատասխանն է տալիս:

«Մեր վէճը սուլթանի հետ չպէտք է յանձնի եւ չէ կարող յանձնել իրաւարար Ատեանին: Իրաւարար դատաստանը ընդունելի կը լինէր, եթէ մենք գտնէինք ճշյոյիտ կերպով որոշած մի ընդհարումի դիմաց, եթէ մենք ունենայինք կարգադրելու միմիայն Գրանէի, Լօբանասի, Տուրքիի եւնի գործերը: — Այդպէս չէ, սակայն Տարինիկից ի վեր սուլթանը, շորհիւ Եւրօպայի թուրքական, կարողացել է ծաղրել դաշնագրիները, իսխաւոր լայնարձակապէս բոլոր մարդկային օրէնքները: Նա ինքզինքը բուրս է ձգել օրէնքից: Գողութիւնը, կաշառակրութիւնը, թաւանք եւ սպանութիւնը նրա կոտաւարելու միջոցներն են:

Ամէն ոք զիտէ այդ, ամէն մէկը խոստովանում է այդ եւ սակայն այդ ոճիրները շարունակում են դու... Հրդեհը սյրում է Եւրօպայի աչքերի առջեւ եւ հարիւր հազարաւոր զօները հեծկտում են նրա ականջների տակ:

Կառավարութիւնները քաղաքագիտական էին կարծել՝ կոյր ու խուլ ձեւանալ բայց հարստահարածների գանգաճառը նրանց գլուխները վրայից անցնելով՝ ժողովուրդների սրտի մէջ մտաւ: Այն ժամանակ առաջ եկաւ մէկ սթափում եւ ֆրանսիական պարլամենտին է պատկանում նրա ազգանշանը տալու պատիւը *):

Երբ արաւքին գործերի միմիայն փորձեց ներկայացնել Գրանէի, Լօբանասի եւ Տուրքիի գործերի բոլորութիւնը՝ ամէն կողմից տալատուի, անհամբեր նեղուկեան նշաններ էին երեւում եւ երբ նա վերջացրեց մէկ ձայն միայն կար բոլոր նստարանների վրայ, մէկ ձայն, որ ուզում էր ազգարարել միմիայնական ձափ պակասը այս բառերով: «Իսկ Հայաստանը»:

Երկար ժամանակ թմրած՝ ֆրանսիական գիտակցութիւնը լսելի դարձրեց ինչն իրեն, եւ Եւրօպական գիտակցութիւնը չի յապաղի մի անգամ եւս արձագանք տալու նրան: Սուլթանը, ուրեմն դատապարտւած է նորից մեղադրեալի իր դիրքը բռնելու: Նա զգում է, որ Եւրօպայի ձեռքը նորից վրայ է հասնում կանգնեցնելու նրան: Ա՛յս է արգիօք վայրկեանը, որից կուզենան օգտուել խաղաղասէրները քաջալերելու նրան, բայց անելու նրա առջեւ ԼաՏէի Ատեանի սուրբ պատասանը:

Ո՛չ, հազար անգամ ոչ: Դա կը լինէր արդարութեան կատակերգութիւն, դա կը նշանակէր՝ ծածկել անիրաւութիւնը եւ կոտորածը... Իրաւարար դատաստանը կը դառնար ոչ թէ մի միջոց թայլերի՝ ընդդէմ հզօրների, զօների՝ ընդդէմ դահիճների, այլ կը լինէր ապաւէն միմիայն բռնակալների ու մարդատուանների համար:

Ոչ, սուլթանը միայն մի բան ունի անելու: այն է վերջացնել իր հայիւները, բայց իր բոլոր հայիւները: Մէկ բան միայն պէտք է անել, այն է կանդանցնել նրան ոչ թէ միայն իր գողութիւնների, այլ եւ իր սպանութիւնների, իր գարշելի ոճիրների ճանապարհին:

Այդ վեհապետը, որին անգլիական եւ ֆրանսիական պարլամենտներում բարձրաձայն որակեցին՝ մարդասպան բռնույ, առանց որ մի նախագահ կամ մի միմիայն համարձակէր բողոքել, այդ վեհապետը քաղաքակիրթ աշխարհի հրապարակական թշնամին է: Նա կարողացել է մինչեւ օրս օգտուել Եւրօպական երկպառակութիւնից, բայց այժմ չափն անցած է եւ քանի որ զէպքերը ստիպեցին մեզ միջամտել, թող Ֆրանսիան քարոզէ իր հետեւից զզջացող Եւրօպային եւ թող բոլոր պետութիւնները գումարւին այսօր, ինչպէս 23 տարի սրանից առաջ Բերլինում, եւ մի անգամ եւս համերաշխ ընթանան՝ շարունակելու համար իրենց հսկողութիւնը եւ հարկ եղած զէպքում իրենց ճնշումը:

Մրանք են պատճառները, որոնց հիման վրայ ես չեմ ընդունի սուլթանին իրաւարար Ատեանի առջեւ: Աւելագնում եմ, որ հանդամանքները թուում են ինձ բացասիկ կերպով նպատաւոր որպէս զի պետութիւնները օգտուելով մեր նախաձեռնութիւնից, ստանան նրանից այն գոհացումներն ու երաշխաւորութիւնները, որ պահանջում են ոչ թէ միայն մի քանի պահանջատէրներ, այլ բովանդակ մարդկութիւնը»:

* * *

Frankfurter Zeitung-ին հեռագրում են Նոյեմբերի 7-ին, որ համայն Աւստրիայի սօցիալ-դեմոկրատական կոմբարտը (ուր ներկայ էին Գերմանիայից Բէթել, Կաուցկի եւ Բեքնշտայն) իր մի նիստում համակրութեան ցոյց արաւ հայերին:

*) Յօդուածագիրը ակնարկում է նոյեմբերի 4-ին հուլիական խնդրի մասին եղած հարցաանուումի մրայ:

* * *

«Դրօշակի» խմբագրութիւնը առանձին նամակներով գիւց իտալական պարլամենտի անդամ՝ Ենրիկօ Ֆէրրիին և գերմանական Ռայխստագի անդամներ՝ Քէրէլին և Կէրտեռին, ինչպէս Նրանց հարցապնդում անել մեր խնդրի առթիւ պատգամաւորական ժողովներու:

**ՔՐԻՍՏԻԱՆ ԽՈՅՆԱԿԱՆՆԵՐԸ ԵՆ
ՂԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱՆՆԵՐԸ**

Իրբն արծազանք Բրիւսէլի Միջազգային Սօցիալիստական Բիւրօյի լուչին Քրիստիանեան միացուալ սօցիալիստ կուսակցութիւնը հրատարակ նետնց իր կողմից մի մանիֆէստ՝ ուղղած Փրանսիայի աշխատուոր դասակարգին: Անաւասիկ այդ մանիֆէստն իր ամբողջութեամբ:

Աշխատուորներ, սօցիալիստներ,

Ամիսներից ի վեր ամենայնոցէ լուրեր են գալիս մեզ Հայաստանից: Բազմաթիւ գիւղերում, բազմաթիւ նշանաւոր կենտրոններում՝ Եգերէկ, Խնուս, Մուշ, Սասուն և երկրի շատ ուրիշ կէտերում տեղի են ունեցել առանձնապէս նշանաւոր ջարդեր և զանազան նշաններից երևում է, որ կարծէք մօտ ապագայում պիտի իրագործին շարաշուք ծրագիրներ: Այդ նշաններից մէկն է զօրանոցների կառուցումը Հայաշատ վայրերում և զինուորական ուժերի անսովոր ծաւալումը: Աերջապէս պէտք է ստել որ — նոյնիսկ մի կողմից թողնելով նոր կասութեամբ ամենասարսափելի անցքերը և բնաջնջման այն հաւաքական ու անսպասելի միջոցները, որոնք սպառնում են ապագայում — Փոքր-Ստիպի հայ ազգաբնակչութեան դրութիւնը վերջին ծայր արժանի է՝ իր վրայ պահելու քաղաքակրթւած աշխարհի և մասնաւորապէս սօցիալիստների ուշադրութիւնը:

Սկսած 1894-ի, 95-ի և 96-ի մեծ հեկատոմբներից, սկսած այն ժամանակից, երբ երեք տարւայ միջոցում երեք հարիւր հազար հայ, այդ կին, ծեր ու երեխայ ընկան Աբդի և Համիդի ծառաների հարածների տակ, — թիւրքական Հայաստանը, չնայած սուլթանի խոստումներին ու ստանձնած պարտաւորութիւններին՝ անդադար եղել է թատերաբեմ ամէն տեսակ թշւառութեան, ամէն տեսակ վայրենութիւնների, ամենաանտիրտ և ամենազարշիլ եղեւնափորների:

Հայերի դէմ ամէն բան թողատուած է. ամենայնցաւոր գործադրութիւնները դառնում են օրինաւոր, նրանք բացարձակապէս կամ լռելիայն խրախուսուում են երլըրդ Բիսուկի Մարդուց: Քրդերը, համիդիէները — սուլթանի այդ ժամանակակից ենիչերիները՝ աւելի անողորմ և աւելի բարբարոս քան նախկինները՝ իշխում են տիրականօրէն հայերի կայքի և անձի վրայ: Նրանք զրկում են հայերին իրենց հողերից — եթէ նրանց հաճել է այդ — և ապա ստիպում են նրանց իբրև ստուկների, մշակել այդ հողերը, որոնց տէրերն էին նրանք քիչ առաջ: Նրանք յափշտակում են հայերի հօտերը, տանում են նրանց հունձը, գողանում են նրանց մօտ եղած չեղած դրամը: Առանց պատրակի, սոսկ քմահաճոյքով նրանք պաշարում են ունէ գիւղ, թալանում են այն, գերի են առնում պատաւոր բնակիչներին, որոնց յետոյ սպանում են կամ բանտ են նետուում Բունաբարում են

կանանց և ջահէլ աղջիկներին: Երբեմն ահաւոր սպառնալիքներով նրանք աջողում են խլամայնել բնակիչների մի մասը և այդպիսով պսակում են ամօթի և բնաջնջման իրենց գործը առաքելութեան մի գարշիլ լուսապակով:

Հարց կրտան՝ ինչպէս է պատահում արդեօք, որ մի ժողովուրդ թող է տալիս այդպէս խողխողել իրեն և չի փորձում ընդվզում մի ահագին շարժումով դետին փոել հարստահարիչին: Բայց, ինչպէս որ ասած է նորերս Գլասկօլի խաղաղութեան կօնգրէսին ներկայացած մի յիշատակագրում, «Բունութիւնների և մարդասպանութիւնների դէմ պաշտպանելու համար հայերը ոչ մի միջոց չունին, քանի որ նրանց արգելած է ունէ զէնք կրել: Դանակներն անգամ խլում են նրանցից, մինչդեռ բոլոր քրդերն ու թիւրքերը լաւ զինւած են, դարերից ի վեր նրանց արգելւած է մինչև իսկ գագանակներ ունենալ»: Հայերը մի անպաշտպան որս են քրդերի ու թիւրքերի համար և այդ որսը նրանք բրունում են, չարչարում, պատառոտում են, նրանց տանջանքներից մի սոսկալի հրձանք են ստեղծում նրանք իրենց համար:

Կողոպուտներ, սպանութիւններ, բռնաբարութիւններ — այդ ոճիրները կատարում են ամէն օր և նրանց լուրը հասնում է Եւրօպա և պետութիւնների գիււնատները տեղեկանում են նրանց մասին իրենց հիւպատոսների պաշտօնական զեկուցումներով, ինչպէս նաև դժբախտ հայերի յաճախակի զանգատներով և թախանձագին կոչերով:

Եւրօպական պետութիւնները իրազեկ են, բայց մնում են լուռ, անկարեկիր և իրենց այդ անտարբերութեամբ ու լուռութեամբ նրանք ծածկում են սուլթանի հրամանով գործւած ոճիրները:

Ինչու մնում են նրանք լուռ ու անկարեկիր: Չեն կարող արդեօք միջամտել վախճան դնելու բոլոր իրաւունքների այդ բռնաբարումին, այդ անդադրում ու յանդուգն մարտակոչին, որ ուղղւած է ընդդէմ մարդկութեան: Դատապարտւած են նրանք արդեօք անդրդելի մի ճակատագրով՝ անգոր և անշարժ հանդիսատես մնալու արդքան զազրելի ոճիրների:

Ոչ, մի յատուկ դաշնագիր, Բերլինի դաշնագիրը, ստորագրւած Թիւրքիայից, միաժամանակ և Գերմանիայից, Անգլիայից, Իտալիայից ու Փրանսիայից՝ սահմանել է հայերի դրութիւնը: Հրատարակել է անհրաժեշտ սեպւած բարենորոգումներ և լիազօրութիւն է տւել այդ այլազան ազգութիւններին՝ միջամտելու և հովանաւորելու հայերին: Այդ դաշնագրի 61-րդ յօդւածի համաձայն՝ «Բ. Դուռը պարտաւորուում է անյապաղ իրագործել այն բարելաւումներն ու բարենորոգումները, որ պահանջուում են հայաբնակ գաւառների տեղական պետքերից և ապահովել նրանց չէրքէզների ու քրդերի դէմ: Նա պարբերաբար կը զեկուցանէ այդ խնդրի համար ձեռնարկւած միջոցները պետութիւններին, որոնք կը հսկեն նրանց գործադրութեան վրայ»:

Բերլինի դաշնագրի այդ յօդւածը մնաց մեռած տառ, մասամբ սուլթանի, մասամբ էլ Եւրօպայի յանցանքով: Նախատեսուած միջոցներին սուլթանը չի ձեռնարկել իսկ պետութիւնները, որոնք պիտի հսկէին նրանց գործադրութեան վրայ՝ միանգամայն աչքաթող են արել նրանց: Այն գարշիլ սպանութիւնները, որոնք 1894-ից

մինչև 1897 անապատ գործերին Հայաստանը՝ տեղի չէին ունենալ առանց այդ յանցաւոր անտարբերութեան:

1895-ին, Սասունի ջարդերի հետևեալ օրը եւրօպական կառավարութիւնները մի վարկեան գիտակցեցին իրենց վրայ ծանրացող պատասխանատուութիւնները և յիշեցին Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը: Նրա պարունակութիւնը սուլթանին յիշեցնելու համար՝ նրանք ընդհանուր համաձայնութեամբ մշակեցին մի յիշատակագիր, որ և լրացրին բարենորոգումների մի ծրագրով: Սուլթանը հաստատեց թէ մէկը և թէ միւսը: Գրանով նա երկրորդ անգամ ճանաչում էր իր պարտականութիւնը տալու հայերին միևնոյն իրաւունքները, ինչ որ միւս հպատակներին, իր պարտականութիւնը՝ պաշտպանելու նրանց ամէն տեսակ յարձակումների դէմ և պետութիւնների իրաւունքը՝ հսկելու, որ կիրաւուի հայ հպատակների համար ընդհանուր օրէնքը:

Այդ մէտօրանդումի յօդուածների մէջ յիշատակեցրէ հետևեալը. «70 նշանակել բարձրագոյն վերահսկող կոմիսար՝ ըէֆօրմները գործադրելու գաւառներում. 80 կազմել մի միայուն քննիչ յանձնաժողով և Պոլսում»:

Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի պէս 1895-ի մէտօրանդումը ևս մնաց ապարդիւ: Ոչ Թիւրքիան, ոչ էլ պետութիւնները ամենափոքր ուշադրութիւն անգամ չգործարին նրա վրայ: Այսօրայ մեր պահանջն է՝ որ նրանք յիշեն այդ դաշնագրի գոյութիւնը և ըստ այնմ գործեն, մեր պահանջն է՝ որ Ֆրանսիական կառավարութիւնը գիտակցէ իր պարտքը և իր իրաւունքը գործադրէ, որ նա դուրս գայ իր անտարբերութիւնից և անէ այն ժեստը, որը կարող է փրկել հարիւր հազարաւոր մարդկային կեանքեր և գուցէ ազատել մի ամբողջ ցեղ ընացնելու միջ:

Ներկայ ժամին միջամտութեան այդ պարտականութիւնը աւելի ջորեղ է, քան երբ և իցէ, ոչ թէ միայն այն պատճառով, որ բացառիկ ծանրակշիռ անցքեր թուում են անխուսափելի, այլ նաև որովհետև ուրիշ կարգի դործեր — իսկպէս ամենացած կարգի — առաջ են բերել կէս-խզում նրա և Բ. Գրան յարաբերութիւնների և յարուցել են երկուսի միջև դիւանագիտական մէկ խօսակցութիւն, որի նիւթը շատ դիւրին կը լինէր ընդարձակել և որի աստիճանը դիւրին կը լինէր բարձրացնել: Մեր կառավարութիւնը, որ տարիների ընթացքում անվզայ է գտնուել այնքան գազանութիւնների տեսարանի հանդէպ՝ յուզեց երբ տեսաւ, որ օսմանեան կառավարութիւնը յայտարարում է կարգադրել դրամական խնդիրը, որ շահագրգռում է Ֆինանսական մի ընկերութեան և մի քանի բանկիրների, և նա յուզեց այն աստիճան, որ պատրուակ տւեց իր դեսպանին՝ Ֆրանսիա վերադառնալու և միաժամանակ հրահանգեց Պարիզի Թիւրքաց դեսպանին՝ թողնել իր պաշտօնը:

Արդ, այս ըստէս, երբ Ֆրանսիական հանրապետութեան կառավարութիւնը՝ դառնալով եռանդուն սպասաւոր մի քանի կապիտալիստների շահերի՝ ընդհարումի մէջ է մտել Երլբըզ Բիօսկի կառավարութեան հետ — մենք պէտք է յիշեցնենք նրան, որ շատ ժամանակից իվեր բոլորովին տարբեր պատճառներ — մարդկայնութեան պատճառներ, ինչպէս նաև վստահութեան այն զգացմունքը, որ հայ ժողովուրդը տածել է դէպի նա — պիտի առաջ բերէին նրա կորովի միջամտութիւնը այդ (Թիւրքաց) կառավարութեան գործերում. մենք պէտք է

յիշեցնենք նրան (Ֆրանս. կառավարութեան), որ նա չի կարող — առանց ինքզինքը ծածկելու անընդելի ամօթով — աւելի ևս յայտարարել՝ պահանջելու, որ ի գործ դրին Բերլինի դաշնագրի և 1895-ի մէտօրանդումի յօդուածները: Համաձայն 1900-ի սօցիալիստական միջազգային կոնգրէսի մէկ վճռին՝ միջազգային սօցիալիստական բիւրօն այս օրերս հրաւեր ուղղեց բոլոր երկրների սօցիալիստ կուսակցութիւններին, որ նրանք ազգեն իրենց պարլամենտների և կառավարութիւնների վրայ, որպէս զի պետութիւնները վերջ դնեն Հայաստանի կոտորածներին: Ցամուհիսի օրից յետոյ պատգամաւորական ժողովի բեմից սօցիալիստ հետադիմները լսեցնել կրտան մեր կուսակցութեան բողոքը և կը պահանջեն մեր կառավարութիւնից կատարել իր պարտքը: Ձեռք կասկածում, որ ուրիշ պարլամենտներում ևս մեր արտասահմանեան բարեկամները բեմ կը հանեն միևնոյն խնդիրը և կը գործեն միևնոյն ոգով: Ուրիշ երկրներում սօցիալիստները համաձայն միջազգային բիւրօսի ցանկութեան՝ մամուլի, հրատարակական ժողովների միջոցով կը լուսաւորեն հանրային կարծիքը և կը շարժեն մասսաները:

Պէտք է, որ մեր երկրում ամբողջ սօցիալիստ կուսակցութիւնը ոտքի կանգնէ և լսեցնէ իր ձայնը: Պէտք է, որ մեր սահմանների այս և այն կողմը սօցիալիստ ընտրեալների գործունէութիւնը երկրորդի բոլոր սօցիալիստների գործունէութեամբ, մամուլի և ժողովների մի մեծ շարժումով:

Աշխատաւորներ, սօցիալիստներ, ջանացէք, որ 1900-ի միջազգային կոնգրէսի խօսքը վերածուի գործի:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Թ Ե Ր Թ Օ Ն

Կ Ե Ա Ն Ք Ի Գ Ի Մ Ա Ց

Գաժան կեանքի դիմաց կանգնած էին երկու մարդ, երկուսն էլ դժգոհ նրանից և կեանքի հարցումին «Ի՞նչ էք ինձնից սպասում».— նրանցից մէկը նաղած ձայնով ասաց. — «Ի՞նչ հակասութիւնների խտութիւնից եմ պարբացած ես. իղուր իմ բանականութիւնը ձգտում է ըմբռնել գոյութեան խորհուրդը և քո հանդէպ հոգիս լի է վարանումի խաւարով: Իմ ինքնագիտակցութիւնը ասում է ինձ, որ մարդս լուսագոյնն է բոլոր էակներից. . .

— Ի՞նչ ես ուզում ինձնից, հարցրեց կեանքն անտարբեր:

— Երջանկութիւն. . . Իմ երջանկութեան համար անհրաժեշտ է, որ դու հաշտեցնէիր իմ հոգու հակասութիւնների երկու հիմունքները՝ իմ «ուզում եմ»-ը քո «պարտաւոր եմ»-ի հետ:

— Ուզիր այն, ինչ որ պարտաւոր ես ինձ համար, խտութեամբ պատասխանեց կեանքը:

— Ես չեմ ցանկանում լինել քո զոհը, բացականչեց մարդը. ես կեանքի տէրն եմ ուզում լինել, այն ինչ պարտաւոր եմ ձկել վիզս նրա օրէնքների լծի տակ — ինչու համար. . .

— Խօսեցէք աւելի պարզ կերպով, ասաց միւս մարդը, որը աւելի մօտ էր կանգնած կեանքին. իսկ առաջինը շարունակում էր, ուշք չզարձնելով ընկերոջ խօսքերին: — Ես ազատութիւն եմ ուզում — ապրել ներդաշնակ

իմ ցանկութիւններէ հետ, և ես չեմ ուզում լինել պարտականութեան զգացումով ոչ եղբայր, ոչ ծառայ մերձաւորի համար: Ես կը լինեմ այն, ինչ որ ազատորէն կ'ուզեմ — ստրուկ կամ եղբայր: Ես չեմ ուզում մի քար լինել հասարակութեան մէջ, որ այդ հասարակութիւնը դնում է ուր և ինչպէս կամենում է, շինելով իր բարորութեան բանտերը: Ես մարդ եմ, ես կեանքի սգին ու բանականութիւնն եմ, ես պէտք է լինիմ ազատ:

— Սպասիր, ասաց կեանքը, դժգոհութեն խնդալով: — դու շատ խօսեցիր, և ինչ որ յետոյ պիտի ասես, ինչ յայտնի է. դու ուզում ես ազատ լինել լաւ, եղբր. կուր ինչ հետ, յաղթիր ինչ և եղբր իմ տէրը, ես այն ժամանակ կը լինեմ՝ քո ստրուկը: Դու դիտես, ես անտարբեր եմ և միշտ դիւրութեամբ անձնատուր եմ լինում յաղթողներին: Բայց պէտք է յաղթել: Բնութեան կեանքը ես արդեօք կուրել ինչ հետ՝ քո ազատութեան համար: Բաւականչափ ուժ ունիս քո մէջ յաղթութեան համար և հաւատով ես արդեօք քո ուժին:

Եւ մարդը արտում պատասխանեց. «Դու մըցցիր ինչ դէպի ներքին կուր, դու դանակի պէս սրեցիր իմ բանականութիւնը, նա միւսեց հոգուս խորքը և ջանջախեց նրան»:

— Է՛հ, դուք անելի խիստ խօսեցէք նրա հետ, մի՛ դանդաղեք, ասաց միւսը:

Իսկ առաջինը շարունակում էր. «Ես հանդուստանալ եմ ուզում քո ճնշումից: Օ՛ր, թող տուր ինչ ճաշակել երջանկութիւնը»:

Դարձեալ ժպտաց կեանքը, — մի ժպիտ, որ սառուցի փայլի էր նման:

— Ասա՛ ինչ, երբ դու խօսում ես, պահանջում ես արդեօք թէ խնդրում:

— Խնդրում եմ, արձագանքի պէս պատասխանեց մարդը:

— Դու խնդրում ես սովորական մուրացկանի պէս, բայց, խեղճ մարդ, ես քեզ պիտի ասեմ, որ կեանքը ողորմութիւն չի տալիս: Եւ գիտե՛ս որ, ազատ մարդը չի խնդրում, այլ նա ինքն է վերցնում իմ պարգևները... Իսկ դու, դու միայն քո ցանկութիւնների ստրուկն ես և ուրիշ ոչինչ: Նա է միայն ազատ, որը ուժ ունի հրափարելու իր ընդ որ ցանկութիւններից, որպէս զի ամ ժողովի միմիայն մէկի մէջ: Հասկացա՛ր: Հեռացիր:

Նա հասկացաւ և շան պէս պառկեց անտարբեր կեանքի ոտքերի տակ, որպէս զի կամացուկ բուն է նրա սեղանից նետած փշօանքները:

Այն ժամանակ անողորմ կեանքի դժգոյն աչքերը դարձան դէպի միւս մարդը, որը մի անտաշ, բայց բարի դէմք էր:

- Դու ինչ ես խնդրում:
- Ես չեմ խնդրում, պահանջում եմ:
- Ի՞նչ:
- Ո՞րտեղ է արգարութիւնը, տուր ինչ նրան: Բոլոր մնացածը ես ինքս կ'անեմ, առայժմ ինչ պէտք է միմիայն արգարութիւն. ես երկար սպասեցի, ես համբերութեամբ սպասեցի, ես ապրեցի աշխատանքի մէջ, առանց հանգստի ու լոյսի, ես սպասեցի... բայց բաւական է: Ժամանակ է ինչ ապրել. ո՛ւր է արգարութիւնը:
- Եւ կեանքն անտարբեր պատասխանեց նրան.
- «Վերցրո՛ւ»:

ԿԱՔՈՒՄ ԿՕՐԿԻՑ

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

ՆԱԽԱՅԱՆԳՍՑԻ ԿԵՂՐ. ԿՈՒՄԻՏԷՆ ստացած է՝

ԱՊՐԱՅՍՆԻ «Կարիք» լսմբից՝ Զար պողապից՝ Ստամբուլի, Մ. 5-ական ուրախ, Ա. 2., Գ. 3-ական, Թ. Ա. 2, Ա. Ն. 2 ու 50 կուր, Գ. 70. 1 ու 50 կ., Ա. Թ. 1 ու 50 կ., Գ. Ա. Մ. Ա., Կ. Ն., Զ. Գ. մէկմէկ-ական ու, 70. Ա., Ս. 2., 4. Գ., Ա. Ե., Գ. 0. Գ., Զ. Գ., Ս. Ա., Մ. Ա. 60-ական կ., Գ. 0. 40 կ., Գ. Ա. 20 կ., Ժմակից՝ 70. Ե. 5 ու, Զ. Կ. Գ. 3 ու, Զ. Մ. 2, Ս. Գ., Գ. Մ., 70. Ե., Կ. Մ., Զ. Թ. մէկմէկական ու, Կ. 8. 75 կ., Զ. Գ. 85 կ., Թ. Է. 27 կ., Ս. Կ. 25 կ., Մ. 70. 25 կ. «Բարեկէն Սիւնի» լսմբ. 11 ու 35 կ., Բէփլէ փողարից՝ Մ. Զ. 1 ու, Ե. Թ. 50 կուր: ԳԱՂԱՎԱՂԱՅՐԻ մասնաճիւղից՝ օրհորուց «Բարեկէն Սիւնի» լսմբի կատարած վիճակախաղից 304 ու, Նէր-նեբից՝ Ալէք 10 ու, Սեդրակ 1 ու, Սամոյ 70ենթի ծեղով հանգանակած ժԱՅՈՒ գիւղի «Առիւծ» լսմբից 10 ու, նոյն գիւղի «Ժերմեց» լսմբից 10 ու, ԺՈՎԱԳՆԻՂԻ «Ալլան» լսմբից 30 ու, Յարութիւն-Վաւազյանից 1 ու, Շահաբաժին 45 ու, ԱՊՐԱՅՍՆԻՑ՝ Մոնակ 25 ու, Զարէն 6 ու, ԴԱՇՏԻՑ՝ Աւետիս Վարպետ 5 ու, ՆՈՐ ԲԵՐԴԻՑ 116 ու, 1900 Թ. ԱՊՐԱՅՍՆԻ «Դժտունեաց» լսմբից 45 ու: Գումար 693 ուրախ 12 կուրէ:

ՎՐՈՂԱԳ. 1901 Թ. № 5 «Դրօշակի» մէջ, ԳԱՂԱՎԱՂԱՅՐԻ ՉԱՓՈՂ գիւղի ներառուութիւնը «Դրօշակի» այս տարւայ № 3-ի մէջ հրատարակած լինելով, չեղանակ չկատեց:

№ 7 «Դրօշակի» մէջ տպւած էր «Կարեւ» լսմբից 50 ու, պէտք է լինի «Կարեւ» լսմբ. 20 ու եւ «Նըշախի» լսմբ. 30 ու:

ՔՈՒԿԱՐԻՍ՝

ՍՆՈՎՆԻ «Հովիտ» օժանդակ կօմիտէն 1900 հոկտեմբերից 1901 սեպտեմբեր՝ զինավարժութեան համար Նէր Մանկունիից 20 լէվ, Նէր գանազան անձերից 11 լէվ 50 սթ, «Տարօնացի» լսմբի անդամավճարներից (1900 հոկտեմբերից մինչև յուլիսի վերջ) 40 լէվ, «Արարատեան» լսմբի անդամավճարներից 20 լէվ 15 սթ, ՍՊՐԱՎՃԱԿ «Սեղոն-Աղբիւր» լսմբ. 69 լէվ, Չիր-բանի պուլկար համակրողից 6 լէվ, ՍՊԱՐԱ-ԶԱԿՈՐԱԿԻ հայ գաղ-թականութիւնից 14 լէվ 10 սթ: Գումար 180 լէվ 75 ստոտ:

Ա Ջ Գ

«Դրօշակի» խմբագրութիւնը, անկանոնութիւնների և սուսափելու համար, իր մասնաւոր ընթերցողներուն, զեկած էր յայտարարութիւններ որոշ հասցէներ պահանջելով անոնցմէ: Մինչև մէկ յունուար 1901 անպատասխանի մնացած յայտարարութիւններու հասցէներուն թերթ պիտի չ'ուղարկուի այլևս:

Հ. Յ. Գ. «Չանք» կօմիտէն լոյս է ընծայել բաց նամակների մի սերիա նշանաւոր յեղափոխականների պատկերներով (Աղբիւր-Սերոբ, Արաբօ, Աշոտ-Թաթուր, Բարկէն-Սիւնի, Գուրգէն, Եգիպտացի, Կարօ, Միսակեան, Պետօ, Վազգէն): Վաճառում են տասնեակներով: Իւրաքանչիւր տասնեակի գինն է մէկ ֆրանք:

Դիմել՝ M. Gaspari, Roseaie, 68, Genève:

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

Ղ Ա Ր Ի Բ

Ա Չ Ա Տ Ո Ի Թ Ե Ա Ն Ճ Ա Ն Ա Պ Ա Ր Հ Ի Ն
ՊՏՏԿԵՐՆԵՐ ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

Գ Ի Ր Ի Բ II

(ԱՐՏԱՊԱՆՈՒ «ԴՐՕՇԱԿ»-ԴՑ)

Գինն է 60 սանտիմ, ճանապարհածախսով 70 սանտիմ: Դիմել՝

Rédaction du «Droschak», Genève (Suisse)